# Ազգ
Azg

3 ՀՈՒԼԻՍ 2020 ՈՒՐԲԱԹ 20(5617)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Չավուշօղլուի՝ «Թուրքիան անվտանգ երկիր է» պնդումը Բեռլինում չանցավ

Հուլիսի 2-ին ԳԴՀ արտգործնախարար Հայկո Մաասը Բեռլինում հանդիպեց Թուրքիայի իր պաշտոնակից Մելվեթ Չավուշօղլուին: Մամլո ասուլիսին Մաասն ընդգծեց, թե հուլիսի 1-ին ԳԴՀ-ի՝ ԵՄ խորհրդի նախագահությունը ստանձնելուց հետո Չավուշօղլուն առաջին հյուրն է, իսկ Թուրքիան ԵՄ-ի համար մնում է կարեւոր խոսակից: Մաասը քննարկված հարցերի շարքում ընդգծեց Սիրիայի, Լիբիայի խնդիրների մասին միմյանց հետ մտքերի փոխանակումը, ապա անդրադարձավ համավարակի կանխարգելմանն ուղղված համաեւրոպական միասնական դիրքորոշմանը՝ Covid 19-ով պայմանավորված ԵՄ մուտքի արգելափակմանը: Հուլիսի 1-ին ԵՄ հրապարակեց այն երկրների ցուցակը, որ առաջիկա երկու շաբաթներին չեն կարող հատել Շենգենյան սահմանը: Մեր տարածաշրջանից միայն Վրաստանին է արտոնություն տրվել՝ վարակակիրներն այնտեղ քիչ են: Թուրքիան դուրս է մնում այդ ցուցակից, ինչպես եւ Հայաստանը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Ոչ ոք հույսը չդնի «ժողովրդի մեծամասնության աջակցության» վրա

Հայաստանում երբեւիցե անցկացվե՞լ է վստահելի հարցախույզ, polls, սոցհարցում. չեմ հիշում: Խոսքը հասարակագիտական բոլոր կանոններով անցկացվող հարցման մասին է, որը զարգացած երկրներում անցկացվում է պարբերաբար՝ ի պէտս իշխանությունների, ընդդիմության, քաղաքագետների եւ մամուլի, ստուգելու համար ժողովրդի տարբեր խավերի, տարիքային տարբեր խմբերի վերաբերմունքը կառավարության գործունեության, քաղաքական առաջնորդների վայելած ժողովրդականության, պետական եւ ազգային նշանակության որոշումների մասին, ընդամենը 1-2 տոկոսից ոչ ավել սխալվելու հավանականությամբ: Հայաստանում նման հարցախույզներ անցկացվել են միայն համապետական ընտրություններից առաջ, այն էլ՝ իշխանախմբի կամ նրա մրցակիցների ռեյտինգը բարձրացնելու, այսինքն կեղծարարական նպատակներով, նայած՝ ո՛ւմ պատվերով:

Ներքաղաքական ներկա գերլարվածության, համավարակի հաղթարշավի եւ սոցիալ-տնտեսական վիճակի անկման պայմաններում գիտականորեն հիմնավորված հարցախույզը խիստ օգտակար պիտի լիներ քաղաքական իրավիճակը, ուժերի հարաբերակցությունը՝ թեկուզ մոտավոր ճշգրտությամբ իմանալու համար:

Մինչ ընդդիմադիր ուժերը պնդում են, որ Նիկոլ Փաշինյանի իշխանության ժողովրդականության ցուցանիշը ներկայիս չի գերազանցում 9, նույնիսկ 7 տոկոսը, իշխանական կողմը շարունակում է վկայակոչել արդեն երկու տարի առաջ անցկացված խորհրդարանական ընտրություններում իր գերազանց՝ 70,43 տոկոս արդյունքները, իրավունք վերապահելով իրեն խոսելու ժողովրդի, ո՛ղջ ժողովրդի անունից, ոտնատակ տալով թե՛ օրենսդրությունը, թե՛ օրինականությունը, թե՛ իրավունքը, թե՛ իրավագիտությունը, նաեւ՝ ժողովրդի շահը:

Առիթ ունեցել եմ գրելու եւ խոսելու 2018 թ. մայիսյան ընտրությունների համաժողովրդական չլինելու մասին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրած պաշտոնական արդյունքները շատ բան են ասում այդ մասին եւ ցույց են տալիս, որ ոչ ոք, ներառյալ Հանրապետության հրապարակում հսկայական բազմություն հավաքած վարչապետ Փաշինյանը իրավունք չունի խոսելու համաժողովրդական աջակցության մասին, առավել եւս հիմա՝ փորձանավոր այս երկու տարիներից հետո: Բավական է հիշել, որ ըստ պաշտոնական այդ արձանագրության, քվեարկելու իրավունք ունեցող, բայց չքվեարկած քաղաքացիների թիվը շուրջ 70 հազարով գերազանցում է քվեարկածների թիվը: Ավելացրեք դրա վրա ընտրություններում հօգուտ «Իմ քայլին» չքվեարկածների շուրջ 40 տոկոսը եւ կունենաք հստակ պատկերը իշխանությունների վայելած ժողովրդականության մասին՝ շուրջ 30 տոկոս, որը շատ քիչ է «ժողովրդի դիկտատուրա» հայտարարելու համար: Այդ պատկերում ամենակարեւորը՝ այսպես կոչված «լուռ մեծամասնության» առկայությունն է: Ի բացակայության մասնագիտական հարցախույզների, մենք չգիտենք ա՛յդ մեծամասնության կարծիքը, ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր տեղի ունեցողի մասին: Չգիտենք նաեւ վերոհիշյալ 30 տոկոսի կարծիքը, որն անշուշտ փոփոխված պետք է լինի անցնող երկու տարիների ընթացքում: Համենայնդեպս, դժվար է ասել, թե որքանով է ընդունելի ընդդիմության հայտարարած 7-9 տոկոսը, եւ է՛լ ավելի անհիմն է կարծելը, թե ի վնաս Փաշինյանի նվազած ձայները, ներկա պարագայում՝ աջակցությունը, փոխանցվելու է ընդդիմադիրներին: Նման թվաբանություն չի՛ կարող լինել:

Ո՞րն է ընդդիմադիրների նման ենթադրությանը տուն տվող պատճառը՝ դարձյալ անորոշ է. իշխանությունների թույլ տված հրահաջորդ սխալների առատությո՞ւնը, դրանց նկատմամբ հասարակության ավելի լայն խավերի բնական դժգոհությո՞ւնը, համավարակի դեմ արդյունավետ պայքարի ձախողո՞ւմը, ֆեյսբուքյան հակաիշխանական գրառումների առատանա՞լը: Այդ եւ այլ հարցերի պատասխանը հստակ կլիներ, եթե մեր ձեռքի տակ ունենայինք ազգաբնակչության կարծիքն ստուգող գիտական ուսումնասիրություն՝ հարցախույզ: Այսուհանդերձ, ընդդիմությունը հույս ունի, որ հանրության լայն զանգվածներն ի վերջո դուրս կգան փողոց, նույնիսկ արտակարգ դրության պայմաններում, եւ կտապալեն ներկա իշխանությունը:

Իմ տպավորությամբ, դատելով խորհրդարանական ընդդիմության առաջնորդին՝ Գագիկ Ծառուկյանին ի պաշտպանություն բողոքի բավական մարդաշատ հավաքներին ի պատասխան «տասն անգամ ավելի» ցուցարարների փողոց դուրս հանելու վարչապետ Փաշինյանի սպառնալիքից, նույնը անելու հույսեր է փայփայում նաեւ իշխանությունը, որը շարունակում է երանությամբ հիշել եւ վերհիշել 2018 թ. իր «աստղային ժամերը»:

Զուր հույսեր՝ երկուստեք: Մեր ժողովուրդը, նրա ակտիվ հատվածը նկատի ունեմ, սպառել-մսխել է իր ներուժը, ներքին եռանդը, ուժասպառ է եղել ներկա անհեռանկար պայմաններում: Հոծ զանգվածներով նա այլեւս չի կարող փողոց-հրապարակ դուրս գալ ո՛չ այս, ո՛չ էլ այն կողմից:

Առավելագույնը, որը կարող է անել մեր ժողովուրդը, ամենավատն է մեր երկրի ու պետականության համար՝ ճանապարհների վերաբացումից հետո փախչելն է երկրից, արտագաղթելը, կամ, ինչպես ամերիկացիներն են ասում՝ ոտքով քվեարկելը:

Վերջին հույսը մնում է խորհրդարանի վրա՝ իր տարբեր հատվածներով, ներառյալ «Իմ քայլ»ականներրի այն մասը, որը մտածել գիտի եւ հայրենասեր է: Վստահ եմ՝ դեռ կան այդպիսիք:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Թաներ Աքչամը հորդորում է Էրդողանի իշխանություններին. «Եթե ժխտողականության համար հատկացված գումարները կուտակվեին, ապա հնարավոր էր լուծել ցեղասպանության հարցը»

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ
Թուրքագետ





Ինչպես արդեն տեղեկացրել էր «Ազգ»-ը, հունիսի 23-ին Անկարայում Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի գլխավորությամբ գումարված նիստում նախագահականին առընթեր գործող Բարձրագույն խորհրդակցական խորհուրդն ընդունել է «Ցեղասպանության հայկական պնդումներին արձագանքելու եւ համապատասխան ռազմավարություն մշակելու համար քաղաքացիական ինքնավար կառույց ստեղծելու» որոշում: Խորհուրդի այդ որոշումը աշխուժորեն քննարկվել է թուրքական մամուլում,պատմաբանների, քաղաքական մեկնաբանների եւ դիվանագետների մասնակցությամբ: Մինչ քննարկումները շարունակվում էին, հունիսի 24-ին «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի միության»՝ ASIMDER-ի նախագահ Գյոքսել Գյուլբեյը ողջունել էր հիշյալ որոշումն ու որոշման առնչությամբ շնորհակալություն հայտնել Էրդողանին, ասելով. «Այսպես կոչված Հայոց ցեղասպանությունը 104 տարի (պետք է 105 լինի) շարունակ փորձանք է եղել Թուրքիայի գլխին, հարկ է 2020-ին հիմնովին վերացնենք այս փորձանքը, եթե ուզում ենք, որ մեր երեխաներն ապագայում ստիպված չլինեն զբաղվել հայկական ստերով ու զրպարտություններով»:

Որքան էլ թուրքական թերթերը Բարձրագույն խորհրդակցական խորհուրդի հունիսի 23-ի նիստում ընդունված որոշումը պայմանավորեն «ցեղասպանության հարցում հայերի ռազմավարության փոփոխության հետ», թե «ցեղասպանության» փոխարեն սկսել են օգտագործել «մարդկության դեմ հանցագործություն» արտահայտությունը, իրականում դրա հիմքում ընկած է հունիսի 22-ին Ժնեւում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդի 43-րդ նստաշրջանում Հայաստանի ներկայացրած Ցեղասպանության կանխարգելման բանաձեւի ընդունումը: Քանի դեռ ծավալվում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, մենք՝ հայերս ռազմավարություն փոխելու կարիքը չունենք, թուրքերն էլ՝ նստաշրջանի ընդունած բանաձեւը չեղյալ հայտարարելու հնարավորություն:

Այդ է, ըստ երեւույթին, պատճառը, որ Թուրքիայում չեն դադարում Բարձրագույն խորհրդակցական խորհրդի ընդունած որոշման շուրջը ծավալվող բանավեճերը: Թերեւս պատահական չէ , որ հունիսի 26-ին որոշման առնչությամբ պարզաբանումներ ստանալու ակնկալիքով «bianet.org-ը » իր թղթակցուհու՝ Փընար Թարջանի միջոցով դիմել է Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության պատգամավոր Կարո Փայլանին եւ Մինեսոտայի համալսարանի պրոֆ.Թաներ Աքչամին:

⇨3

## Ամուլսարի դեմ ամուլ է որեւէ քայլ ու նախաձեռնություն

ՆԱԻՐ ՅԱՆ

Չնայած իշխանությունները խաղաղ հավաքներն ու բողոքի ակցիաները կորոնավիրուսի պատճառով արգելել են, եւ ոստիկաններն իրավունք ունեն դրանք իրականացնողներին բերման ենթարկել, վարչական վարույթ կազմել, բայց Ամուլսարում կրքերը թեժացել են: «Հայկական բնապահպանական ճակատ», «Դեմ եմ Ամուլսարում հանքարդյունաբերությանը» քաղաքացիական նախաձեռնությունների ներկայացուցիչները, ինչպես նաեւ Ջերմուկ, Կեչուտ, Գնդեվազ համայնքների բնակիչները հունիսի 30-ի լուսաբացից փակել էին «Սեքյուրիթի» պահնորդական ծառայության ճանապարհը: «Սեքյուրիթի»-ին վարձել է «Լիդիան Արմենիա» ընկերությունը, պայմանագիր կնքել: Մինչեւ հիմա Ամուլսարի տարածքում վերահսկողություն էր իրականացնում «Պանտերա» պահնորդական ծառայությունը, բայց «Լիդիան Արմենիան» «Պանտերային» փոխարինել է «Սեքյուրիթի»-ով:

Ինչպես եւ սպասելի էր, Ամուլսարի պաշտպանները դիմադրություն ցույց տվեցին: Երբ պահնորդական նոր կազմակերպությունը ոստիկանների հետ Ամուլսար եկավ, ակտիվիստներն արդեն այնտեղ էին:

Ինչպես իր տեսաձայնագրության մեջ ցույց է տալիս «Դեմ եմ Ամուլսարում հանքարդյունաբերությանը» նախաձեռնության ղեկավար **Շիրակ Բունիաթյանը**, պահնորդական նոր ծառայության անդամներն ավտոմեքենաներով, բարձր արագությամբ Ամուլսարի տարածք են մտել ու անվադողերի տակ գցել շան երեք ձագերի: Այդ փաստն ակտիվիստներին զայրացրեց: «Ասենք այստեղ շներ չէին, այլ գյուղացիներ էին, հասարակ մարդիկ, այդքան անուշադի՞ր էիք լինելու, կարելի՞ է այս աստիճան արագ վարել մեքենան ու ձագերին վրաերթի ենթարկել»,- վրդովվեցին ակտիվիստները:

Նրանք պահնորդների այդ արարքը դիտարկում են որպես անտարբերություն ու անփութություն նաեւ իրենց միջավայրի, մարդկանց նկատմամբ: Բացի այդ, բնակիչներին ու ակտիվիստներին բարկացրել էր այն, թե ինչու են անվտանգության աշխատակիցներն ինքնաձիգներով ու մահակներով շրջում Ջերմուկ տանող մայրուղով՝ տարածք, որն նրանց հսկողության տակ չպետք է լինի:

Ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաներն ամբողջ ընթացքում փորձում էին խաղաղ բանակցությունների ձեւաչափը պահպանել եւ ստիպված էին լսել Ամուլսարի պաշտպանների պահանջները: Բողոքի ակցիայի բոլոր օրերին նրանք իրենց պահանջները թելադրեցին: Ինչպես նախկինում «Պանտերայի», այնպես էլ «Սեքյուրիթիի» աշխատակիցները մեծ խմբերով չպետք է շրջեն Ամուլսարի տարածքով: Պահնորդական ծառայությունը պետք է իրականացվի հերթափոխի փոքր խմբերով:

⇨3

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Խորհրդանշաններ

Անցեալները դիմատետրով (Ֆէյսպուք) հայկական պարախումբի մը ելոյթը կը դիտէի: Բաւական լաւ մարզուած կ'երեւէին, քանի որ զանազան շարժումներով մէյ մը ուղիղ, մէյ մը խաչաձեւ շարքեր կը կազմէին հայկական երաժշտութեան ուղեկցութեամբ: Յանկարծ ուշադրութիւնս գրաւեց պարային խաչը, որ որոշ շարժումներով կեռ խաչի վերածուեցաւ... Նախ չհասկցայ, ըսի երեւի լաւ չեմ տեսած, սակայն երկրորդ եւ երրորդ անգամ նոյն պատկերը երբ կրկնուեցաւ, ուղղակի զարմացայ եւ անմիջապէս գրեցի տեսաերիզին տակ. «Խաչը՝ հասկցանք, կեռ խաչը՝ չհասկցանք...»:

Պատասխանը չուշացաւ, երեւի պարադիրն (խորեոկրաֆ) էր, որ կ'ըսէր թէ այդ կեռ խաչը շատ հին խորհրդանշան է խաղաղութեան, կամ յաւերժութեան: Պատասխանեցի որ ես շատ լաւ գիտեմ անոր ինչ ըլլալը, գիտեմ որ հին հայկական նախշազարդերու մէջ ալ օգտագործուած է: Ըսի՝ մեր յաւերժութեան խորհրդանիշը արեւն է, որպէս մենք՝ արեւորդիներ: Այդ կեռ խաչը արիականութեան նշան է, սակայն երբ անիկա դարձաւ միլիոններու գլուխը ուտող հիթլերեան-նացիական խորհրդանիշ, ճիշդ չէ վերակենդանացնել զայն մեր բեմերուն վրայ:

Հռոմէական, թէ բիւզանդական այդ կեռ խաչը ես տեսած եմ սուրիական կարգ մը հնավայրերու մէջ, որպէս որմնազարդ ամրոցներու, պալատներու եւ կրկէս-ամփիթատրոններու պատերուն: Անշուշտ զայն ստեղծող-նախագծող ճարտարապետը որոշ իմաստ մը դրած է անոր մէջ. չեմ կարծեր որ պարզ երկրաչափական պատկեր մըն է:

Այսպիսի վիճայարոյց ուրիշ, մեզի շատ ծանօթ խորհրդանշան մըն ալ կայ՝ Վեցանկիւն աստղը, որ դարձեալ շատ հին ճարտարապետական գծագրութիւն մըն է, որ կազմուած է իրար ագուցուած երկու եռանկիւններէ, մէկը իր սրութեամբ դէպի վեր նայող, միւսը՝ վար, այսինքն երկինքն եւ երկիրը իրար կապելու գաղափարն է, որ իսկապէս գեղեցիկ է, սակայն երբ Իսրայէլ զայն իւրացուց եւ դարձուց իր ազգային խորհրդանշանը, որպէս «Դաւիթի աստղ» անոր իմաստը լրիւ փոխուեցաւ եւ արաբական աշխարհի համար դարձաւ ատելի պատկեր մը, հակառակ որ այդ աստղը դեռ կը տեսնուի սուրիական շատ մը հնադարեայ տուներու պատերուն, նոյնիսկ Հալէպի խորհրդանիշ կեդրոնական ժամացոյցի աշտարակին վրայ:

Ես ուշադրութիւն դարձուցած եմ, որ Դամասկոսի հռչակաւոր մանրահատակային փայտեայ եւ սատափեայ խճանկարային զարդերուն մէջ մինչեւ այսօր կ'օգտագործուի այս աստղը, պարզապէս բազմադարեան դամասկեան այս իւրայատուկ ձեռարուեստը անխաթար պահելու համար:

Վերադառնալով մեր վերը մատնանշած պարային կեռ խաչի պատկերին, չեմ ուզեր տեսակէտս, եւ սակայն կը յայտնեմ իմ մտահոգութիւնը, որ օտար բառեր, օտար հաւատալիքներ եւ աղանդներ իրենց ճամբան կը գտնեն դէպի ժողովուրդ, «անմեղ» ձեւերով, սողոսկելով, մինչեւ որ յարմար օճախի մը հանդիպին, մինչեւ որ անգիտակցաբար ուրիշներ ալ ընդօրինակեն, առանց խորը թափանցելու, եւ այս ձեւով կ'ընդհանրանայ «անմեղ» բանը, որուն ետեւ, վստահ եմ, ինչեր կան թաքնուած:

Քանի մը տասնամեակ առաջ Գերմանիոյ մէջ ծայր առաւ «նոր նացիական» շարժում մը, վերակենդանացնելով կեռ խաչը: Հակառակ որոշ արկածախնդիր հետեւորդներ ունենալուն, անշուշտ զօրաւոր կերպով հակազդուեցաւ գիտակից հանրութեան կողմէ, որոնց մտքերուն մէջ դեռ թարմ կը մնային նացիներու չարագործութիւններն ու բազմամիլիոն անմեղ զոհերու պատճառ դարձած եւ բազմաթիւ քաղաքներ աւերակոյտի վերածած տխրահռչակ Հիթլերն ու իր գաղափարակիցները:

Հարցերը մակերեսայնօրէն դիտելու չէ, անհրաժեշտ է խորաթափանց աչք ունենալ: Այս առթիւ յիշեմ, որ մեր մօտ պսակաձեւ ժահրի անբնական աճին զուգահեռ, պետութիւնը ջանք չի խնայեր անոր առաջքը առնելու, մինչ որոշ անհատներ պետութեան պարտադրած դիմակը, կամ «դնչակալը» իբր որպէս ներկայ իշխանութեան խորհրդանիշ, կը մերժեն կրել, այդ ձեւով իրենց ընդդիմութիւնն ու հակակրանքը յայտնելու, առանց հասկնալու, որ այդ ձեւով վնասուողը նախ եւ առաջ իրենք են, յետոյ ամբողջ ժողովուրդը:

# Բոլորիս անելիքները ներկա պահին

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

պգդ, պրոֆեսոր



Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ դրա բաղկացուցիչ մասը կազմող Հայաստանում ստեղծվել է բարդ եւ շատ դեպքերում անհասկանալի, իսկ հաճախ էլ՝ ուղղակի անբացատրելի իրավիճակ: Երբեմն թվում է, թե իշխանություններն ու ժողովուրդը պարզապես մեկուսացած են իրարից եւ յուրաքանչյուրը գործում է իր համար: Չգիտեմ հատկապես ում մեղքով (իմ կարծիքով՝ ավելի շատ օրվա իշխանությունների), սակայն հասարակությունը բաժանվել է երկու հակադիր բեւեռների եւ իրար դեմ անզիջում պայքարի մեջ մտել: Հատկապես սոցցանցերում չափ ու սահման կորցրած, բառերի ու արտահայտությունների մեջ կոռեկտության բոլոր եզրերը հատած երկբեւեռ այդ հասարակությունը պատրաստ է հոշոտելու միմյանց:

Ես ո՞ւր հասանք: Չէ՞ որ այդ նույն հասարակությունն էր, նույն մարդիկ էին, որ կարճ ժամանակ առաջ համախմբվել, մեկ բռունցք էին դարձել ու ոտքի ելել նախորդների դեմ: Այդ նույն բեւեռներն էին միակամվել ու լուսավոր ապագայի ակնկալիքով համախմբվել: Նրանք, որ ոչ վաղ անցյալում միմյանց նկատմամբ անափ սիրով ու հանդուրժողականությամբ էին տոգորված, հանկարծ դարձել են անհաշտ հակառակորդներ, իսկ երբեմն էլ՝ պարզապես թշնամիներ: Կարծես օտարները քիչ էին, հիմա էլ հայրենի թշնամիներ ունենք:

Իշխանություն ու ընդդիմություն են դարձել բոլորը եւ թվում է, թե միջինը չկա ու չի էլ եղել: Եվ եթե որեւէ մեկը փորձի սթափության կոչով դիմել ժողովրդին, անմիջապես երկու բեւեռների կողմից էլ կարժանանա տարատեսակ, հիմնականում բացասական որակումների: Որպես կանոն, երբ հասարակությունը երկփեղկված է լինում եւ հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է իրար լիովին արժանի եւ միմյանց հոշոտելու պատրաստ այդ բեւեռների խնդիրները լուծելու վրա, ապա լիուլի նպաստավոր պայմաններ են ստեղծվում բոլոր տեսակի թշնամիների, այդ թվում նաեւ թագավարակի աննախադեպ աճի ու տարածման համար: Ասվածի լիարժեք վկայությունը մեր երկրի վիճակագրական տվյալներն են, որոնք վարակակիրների եւ, ցավոք, նաեւ մահացությունների առումով անընդհատ աճում են եւ արդեն հասել են անվերահսկելի հանգրվանի: Թե՛ առողջապահության, թե՛ տնտեսության ասպարեզներում արդեն նկատելի են ավերիչ հետեւանքներ: Գաղտնիք չէ նաեւ, որ երկրում աննախադեպ սրվել է քաղաքական վիճակը:

Որպես Ռամկավար Ազատական կուսակցության երկարամյա անդամ, այս դժվարին պահին հրապարակավ հայտարարում եմ լինելով մտապես պետականամետ՝ այս պահին ոչ իշխանամետ եմ եւ ոչ էլ ընդդիմադիր: Իմ կուսակցության ավելի քան մեկ դար առաջ որդեգրած «Ժողովրդով, ժողովրդի հետ, ժողովրդի համար» դավանանքի կրողն եմ եւ առանց սեթեւեթելու ու կողմերից որեւէ մեկին տուրք տալու, պայքարել եմ այդ գաղափարի իրականացման համար: Իսկ դա ենթադրում է նախ եւ առաջ համազգային խոհեմություն եւ, անկախ քաղաքական-գաղափարախոսական համոզմունքներից, առժամանակ մի կողմ թողնել ծրագրային խնդիրները եւ համախմբվել մեր պետականության շուրջը, որպեսզի հնարավոր դառնա բոլորի ուժերով հաղթահարել այս ճգնաժամային իրավիճակը: Դա հավասարապես վերաբերում է հայրենաբնակ, Արցախի եւ Սփյուռքի հայությանն ու բոլոր քաղաքական-հասարակական ուժերին ու կառույցներին: Հակառակ դեպքում, որպես պատմաբան վստահեցնում եմ, կկորցնենք մեր պետականությունը, ինչպես Հայաստանի Առաջին հանրապետության (ՀԱՀ) դեպքում դա եղավ:

Ի դեպ, բավական խորությամբ ուսումնասիրել եմ ՀԱՀ-ի պատմությունը, մենագրություն եւ բազմաթիվ հոդվածներ եմ հեղինակել եւ կարող եմ վկայել, թե որքան շատ են ընդհանրությունները: Այնպես որ, իսկապես, բոլորիս սթափվելու, պետականության գոյությունը պահպանելու պահն է, իսկ ներքին հակասությունները, իշխանությունների սխալներն ու թերացումները դեռ կհասցնենք քննադատել, ինչու չէ՝ նաեւ մեղավորներին պատժել: Մերօրյա սերունդը խելացի է, անկասկած նաեւ՝ ավելի հավասարակշռված ու հաշվենկատ, այնպես որ մնում է լոկ տուրք չտալ զգացմունքներին, տարբեր բեւեռներց հղված հրահանգներին եւ համախմբվել ու պահպանել պետականությունը: Մի բան, որը ո՛չ վարչապետինն է, ո՛չ ընդդիմադիր ուժերինը եւ ո՛չ էլ մեզ սիրող ու չսիրող դրսի ուժերինը:

Բոլորս գիտենք, որ թավշյա հեղաշրջումն իրականացավ սոցիալտնտեսական հրապուրիչ լոզունգների շնորհիվ, սակայն իրական գործոնը նախկինների դեմ կուտակված մերժողականությունն էր: Գիտենք նաեւ, որ դա իրականացվեց ավելի շատ ընդդեմ, քան թե հանուն հիմնադրույթներով: Գիտենք նաեւ, որ ներկա վարչակարգը քաղաքական, տնտեսական, իրավական եւ այլ ոլորտների իսկական պրոֆեսիոնալների միասնական թիմ դեռեւս չունի: Դրա հետեւանքով էլ սխալներն ու թերացումները մեծ տոկոս են կազմում: Սակայն այդ ամենով հանդերձ, կրկին կոչ եմ անում համախմբվել, առժամանակ սատարել, քանի որ լավ թե վատ, տվյալ պահին նրանք են մեր պետականության կրողները:

Ներկա իշխանություններին էլ կոչ ենք անում ձերբազատվել զգացմունքային դրսեւորումներից, խուսափել ոչ ցանկալի հայտարարություններից, որպիսին էր օրինակ վերջերս «Հայ ժողովուրդը պետականություն, օրենք ու կարգ չսիրող է»: Բոլոր բնագավառներում գործել բացառապես պետական մտածողությամբ, խստագույնս պահպանել խոսքի եւ գործի արժեքն ու հարգը: Միշտ հիշել, որ պետականությունն ավելի քան բարձր արժեք է, որ դրա համար պայքարել ու զոհվել են բազմաթիվ հերոսներ, որ բոլորս պարտավոր ենք գործով պատրաստակամություն ցույց տալ նրանց պատգամներն իրագործելու համար եւ խոնարհվել նրանց անմահ հիշատակի առջեւ, որ գիտակցենք վերջապես՝ պետականությունը նույնքան պատկանում է նաեւ հասարակության ընդդիմադիր ու չեզոք բոլոր շերտերին:

Կարծում ենք, որ ներկա վճռորոշ պահին խիստ անհրաժեշտ է

1 ամեն ինչ անել հասարակությանը երկփեղկված վիճակից դուրս բերելու, «մերոնք-ձերոնք» եւ նման վտանգավոր ձեւակերպումներից ձերբազատվելու համար,

2 աստիճանաբար հասնել հասարակության բոլոր շերտերի միջեւ փոխըմբռնման եւ միմյանց նկատմամբ լիակատար վստահության,

3 փոխզիջումն ու հանդուրժողականությունը դարձնել իրական-կիրառելի (այս դեպքում շատ մեծ դեր է լինի հատկապես իշխանությունների ներդրումը),

4 բոլորի գործունեության հիմքում առաջնային դեր դառնա այն հաստատ համոզումը, որ իշխանությունը հավերժ չի, որ բոլորիս գլխավոր դատավորը ժամանակն է եւ, որ ամենակարեւորն է, բոլորը հաշվետու են սերունդների առջեւ: Հարկավոր է, որ բոլորի համար հստակ լինի դարերով փորձված մեկ պարզ ճշմարտություն՝ այնտեղ, որտեղ վեճ ու անախորժություն կա (դա լինի ընտանիք, հասարակություն, պետություն ու ազգ), այնտեղ հաջողություն չի կարող լինել: Արդ, լինենք միասնական եւ հաջողություններ կարձանագրենք թե՛ տնտեսության, թե՛ քաղաքականության եւ թե՛ թագավարակի դեմ պայքարում:

Ոմանք կարող են ասվածը քարոզ, ոսկե միջին կամ նման մի բան համարել, քննադատել, չընդունել եւ այլն: Պատրաստ ենք այդ բոլորին, միայն թե ականջալուր լինենք միմյանց, որպեսզի կարողանանք հաղթահարել այս դժվարին իրավիճակը: Սա է այսօրվա գլխավոր հիմնախնդիրը:

20-28062020

# Պատվաստանյութի հաջող փորձարկումներ Ռուսաստանում

## *Նորմալ եւ ոչ նորմալ հակազդեցություններ*



Պատվաստանյութի նկատմամբ սուր հակազդեցություն կարող է տեղի ունենալ հազարից կամ հարյուր հազարից մեկի դեպքում՝ նայած պատվաստանյութին, «Սպուտնիկ» ռադիոկայանին ասել է բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր **Միխայիլ Կոստինովը**:

Պարզաբանելով, թե կորոնավիրուսի դեմ պատվաստումից հետո ո՞ր հակազդեցությունները կարող են վտանգավոր համարվել, իմունաբանը նշել է, որ մարմնի ջերմության մինչեւ 38,5 աստիճան բարձրանալը կարելի է համարել սովորական հակազդեցություն, մինչդեռ 38,6 եւ ավելի բարձրանալը կհամարվի ուժեղ հակազդեցություն:

Ներարկում կատարելիս սրսկման տեղում կարող է առաջանալ կարմրություն, բայց դրա տրամագիծը եւ, որ գլխավորն է, պնդացումը, չպետք է 8 սանտիմետրից ավելի լինեն, ավելացրել է պրոֆեսորը:

Ինչպես հաղորդում է «Ռեգնում» գործակալությունը, ներկայումս Ռուսաստանում անցկացվում են Գամալեի անվան գիտահետազոտական կենտրոնում եւ ՌԴ պաշտպանության նախարարությունում ստեղծված պատվաստանյութի փորձարկումները: Ավելի վաղ Մոսկվայի Ն.Ն. Բուրդենկոյի անվան հիվանդանոցում փորձարկումների ենթարկված կամավորները իրենց լավ են զգում, կողմնակի ազդեցություններ չկան:

Ռուսաստանում հավաքական իմունիտետի ստեղծման համար անհրաժեշտ է ունենալ կորոնավիրուսի պատվաստանյութի 70 միլիոն չափաբաժին, Россия 1 հեռուստաալիքին հայտարարել է «Վեկտոր» գիտական կենտրոնի գլխավոր տնօրեն **Ռինատ Մակսյուտովը**:

ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ

# Թաներ Աքչամը հորդորում է Էրդողանի իշխանություններին...

➩1 Թղթակցուհու՝ «ի՞նչ կարծիքի էք «Հյուրիյեթի» վկայությամբ երեք օր առաջ Բարձրագույն խորհրդակցական խորհուրդի Ջեմիլ Չիչեքի առաջարկով ընդունած «Ցեղասպանության հայկական պնդումներին արձագանքելու համար քաղաքացիական ինքնավար կառույց ստեղծելու» որոշման մասին», Փայլանն ասաց, որ քանի դեռ հերքում չի եղել, ուստի պետք է ճիշտ համարել թերթի տեղեկությունը: Ապա նա անդրադարձավ Չիչեքի առաջարկին, հիշեցնելով, որ նա այն անձնավորությունն է, որը 1996-ին «Բիլգի» համալսարանում հայկական թեմայով կազմակերպված գիտաժողովը, որին մասնակցել էր նաեւ Հրանտ Դինքը, համարել էր թիկունքից դաշունահարում, դարձնելով թիրախ մասնակիցներին: «Իրականում, շարունակեց Փայլանը, «մեզ թիկունքից դաշունահարում են» արտահայտությամբ Չիչեքն Հրանտ Դինքի սպանության նախադրյալն էր ստեղծում»:

Ինչ վերաբերում է «քաղաքացիական ինքնավար կառույցի» ստեղծմանը, դրա առնչությամբ հայ պատգամավորը նշեց. «Դա մեզ չի զարմացնում, ի վերջո ժխտողականության քաղաքականությունը 105 տարվա վաղեմություն ունի Թուրքիայում, պարզապես մի նոր կառույց են ստեղծում, որ տեր կանգնի այդ քաղաքականությանն ու ապահովի դրա շարունակականությունը: Գալով նոր կառույցի կազմին, այստեղ եւս անակնկալներ չեմ սպասում, ընդգրկվելու են այն պատմաբանները, որոնք տարիներ շարունակ հարցը կոծկել եւ նենգափոխել են: Հավանաբար կընդգրկեն նաեւ ժխտողականության գործում փորձառու իրավաբաններին եւ դիվանագետներին: Սրանք հեռուստաէկրաններից անընդհատ հայտարարություններ են անում են, թե հայերը ցեղասպանության չեն ենթարկվել: Պարզապես աշխարհը լուրջ չի ընդունում այս պատմաբանների, դիվանագետների հայտարարությունները, որովհետեւ կա իրողություն՝ այն է, որ 105 տարի առաջ այս երկրում յուրաքանչյուր հինգ բնակչից մեկը հայ էր, այսօր հայեր չկան, բացակայում է նաեւ ճշմարտության հետ առերեսումը, կա սոսկ ժխտողականություն»:

Այնուհետեւ Փայլանը վերհիշեց նախագահ Էրդողանի 2014 թվին արտահայտած խոսքերը. « 20-րդ դարի սկզբներին հանգամանքների բերումով կյանքից հեռացած հայերին ցանկանում եմ Տիրոջ ողորմությունը, իսկ նրանց թոռներին ցավակցություն եմ հայտնում », որից հետո նա շարունակեց.«Ես հիմա հարցնում եմ Էրդողանին, ինչո՞ւ էիք ցավակցում եւ ինչո՞ւ 1915-ի իրադարձությունները բնութագրում որպես անմարդկային հետեւանքներ ունեցած իրադարձություններ: Ի՞նչ նպատակով էք այսօր Դուք ժխտում հայերի բնաջնջման փաստը: Ի՞նչ է, ժխտելու համար պետական կառո՞ւյց է հարկավոր Ձեզ: Մինչդեռ հայերն աշխարհի չորս ծայրերում արդարություն են պահանջում: Նա հայերին ցավակցող Էրդողանից վերածվել է Ջեմիլ Չիչեքի ժխտողականության քաղաքականությունն աջակցող Էրդողանի»:

«Ինչ վերաբերում է Թաներ Աքչամին, ապա նա ինքնավար կառույց ստեղծելու առնչությամբ նշեց.«Եթե ասեմ, որ մենք գործ ունենք հայկական մի նոր նախաձեռնության հետ , չեմ սխալվի: Որքան ես եմ հասկանում, կառավարությունը, ըստ ամենայնի, 2023-ին (Թուրքիայի Հանրապետության հիմնադրման հարյուրամյակին) եւ այդ տարի նախատեսվող (նախագահական եւ խորհրդարանական) ընտրություններին պատրաստվում է համապարփակ մի ծրագրով, որ լուծի պետության առջեւ ծառացած բոլոր հիմնախնդիրները: Այս նախաձեռնության բնույթի եւ բովանդակության մասին դեռեւս չունենք անհրաժեշտ գիտելիքներ, կարծում եմ դա պետք է գնահատել Կարս-Անիի ՛ «Մետաքսյա ճանապարհի» կամուրջի վերականգնման ենթատեքստում: «Հյուրիյեթ» թերթի վերոհիշյալ հրապարակումն արդեն մատնանշում է այս նախաձեռնության անհրաժեշտությունն ընդգծող գործոնները, որոնց մեջ առաջնայինը, թերեւս, ԱՄՆ-ի Սենատի, Կոնգրեսի որոշումներն են (Հայոց ցեղասպանության ճանաչման): Դրանք ԱՄՆ-ում ներպետական իրավունքի առումով պարտավորեցնող են, հետեւաբար ունեն Թուրքիային իրավաբանական լուրջ խոչընդոտներ հարուցելու ներուժ: Բացի դրանից, երկրում խորհրդարանական համակարգից նախագահականի անցման պայմաններում Ազգային անվտանգության խորհրդին առընթեր գործող «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի համակարգման խորհուրդը» կազմալուծվել էր, ինչն անհրաժեշտ է դարձնում դրան փոխարինող նոր կառույցի ձեւավորումը: Ես մատնանշված այս գործոններին ուզում եմ ավելացնել եւս մի քանիսը: Դրանց մեջ, թերեւս, կարեւորագույնը «հոգեբանական» ճնշվածությունն է: Թուրքական կառավարությունների ժխտողականության թեզերն այլեւս աշխարհում որեւէ ազդեցություն չունեն գիտական եւ քաղաքական շրջանակների վրա: «Ոչինչ չի եղել, իսկ եթե անգամ եղել է, ապա դրանում արդեն մեղավորը հայերն են» ձեւակերպմանը հանգող ժխտողականության անգիր արած այս թեզերը գնորդ չեն գտնում աշխարհում, ոչ էլ որեւէ մեկը լուրջ է վերաբերում դրանց»:

Այնուհետեւ Աքչամը շարունակեց. «Առ այսօր ցեղասպանության հարցում լռություն պահպանող իսլամական երկրներում անգամ սկսել են «ցեղասպանության ճանաչման» ձայներ բարձրանալ, ինչը թերեւս «հոգեբանական» ճնշվածության ցուցանիշն է: Հիմա «հոգեբանական» առավելության «հասնելու» ուղղությամբ որոշ քայլեր ձեռնարկելու փորձեր են արվում: Սակայն, հարկ է մատնանշել, որ այդ քայլերը, որքան էլ ընդգրկուն լինեն եւ դրանց համար ինչպիսի գումարներ էլ հատկացվեն, եթե չփոխվի մտածելակերպը, ապա դրանք պրակտիկայում ոչ մի արդյունքի չեն հանգեցնի:

Եթե տասնյակ տարիների ընթացքում Ցեղասպանության ժխտողականության համար հատկացված գումարները կուտակվեին մի տեղում, ապա հնարավոր կլիներ շատ լուրջ քայլեր ձեռնարկել հիմնահարցի լուծման ճանապարհին»:

Թաներ Աքչամի այս խոսքերով է ավարտում «bianet.org-ի» թղթակցուհի Փընար Թարջանն իր հարցազրույցը: Դրա գնահատականը թողնում ենք ընթերցողի հայեցողությանը, սակայն չենք կարող, առանց արձագանքի, շրջանցել այն անճշտությունը, որ թույլ է տվել թղթակցուհին եւ չանդրադառնալ Աքչամի արտահայտած առնվազն տարօրինակ դատողություններին: Նախ պետք ասել, որ Թարջանի նշած գիտաժողովը «Օսմանյան հայերը կայսրության անկման շրջանում» թեմայով նախատեսված էր 2005 թ.մայիսի 25-27-ն անցկացնել Ստամբուլի «Բոսֆորի» համալսարանում: Սակայն վարչապետ Էրդողանի կառավարության արդարադատության նախարար Ջեմիլ Չիչեքի Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի ամբիոնից հնչած «թուրք ազգին թիկունքից դաշնահարում են» արտահայտությունից հետո ռեկտորատը հետաձգել էր գիտաժողովը եւ դա երկար քաշքշուկներից հետո սեպտեմբերի 24-25-ին անցկացվել էր «Բիլգի» համալսարանում: Այլ կերպ՝ գիտաժողովն անցկացվել է ոչ թե 1996-ին, ինչպես թղթակցուհին է նշում, այլ 2005-ի սեպտեմբերին, եւ Չիչեքի մեղադրանքը «Բիլգիի» փոխարեն հասցեգրված էր «Բոսֆորի» համալսարանին:

Գալով Աքչամին, ապա նա Ազգային անվտանգության խորհրդին առընթեր գործող «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի համակարգման խորհուրդի» կազմալուծման պատճառաբանությամբ, թուրքական պետության տեսանկյունից անհրաժեշտություն է համարում դրան փոխարինող նոր կառույցի՝ այսինքն «Ցեղասպանության հայկական պնդումներին արձագանքելու եւ համապատասխան ռազմավարություն մշակելու համար քաղաքացիական ինքնավար կազմակերպության» ձեւավորումը, որ նախորդի պես զբաղվի Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը հանդիսացող ժխտողականության հիմնավորմամբ: Նրա առարկությունը այն է, որ թուրքական իշխանությունները տասնյակ տարիներ չեն վերանայել որդեգրած դիրքորոշումը եւ առանց մտածելակերպը փոխելու, նույնությամբ շարունակել են հետամուտ լինել այդ դիրքորոշմանը եւ անտեղի հսկայական գումարներ ծախսել:

Եթե Աքչամը դատապարտում է թուրքական իշխանություններին, ապա դա անում է ոչ թե ժխտողականության կամ այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերի համար, այլեւ աշխարհի գիտական եւ քաղաքական շրջանակների վրա որեւէ ազդեցություն չգործող թուրքական թեզերը նույնությամբ թողնելու պատճառով դրանց արդյունավետությունը չբարձրացնելու համար: Այլ կերպ չի կարելի բացատրել նրա հորդորը Էրդողանի իշխանություններին.« Եթե տասնյակ տարիներ շարունակ ժխտողականության համար հատկացված գումարները կուտակվեին մի տեղում, ապա կարելի կլիներ շատ լուրջ քայլեր ձեռնարկել խնդիրը լուծելու առումով»: Որքան էլ դա վշտացնի սփյուռքահայերին, որոնք Աքչամին դիտում են որպես Հայ դատի առաջամարտիկ, նրա առաջադրած լուծումը վերջին հաշվով հանգում է Թուրքիայի ձերբազատմանը Հայոց ցեղասպանության գլխացավանքից, որ իշխանությունները թոթափեն «հոգեբանական» ճնշվածությունն ու առավելության հասնեն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում հայերի եւ Հայաստանի դեմ մղվող անզիջում պայքարում:

Ինչ վերաբերում է Աքչամի խոսքերին, թե «Կոնգրեսի որոշումներն ԱՄՆ-ում ներպետական իրավունքի առումով պարտավորեցնող են, հետեւաբար ունեն Թուրքիային իրավաբանական լուրջ խոչընդոտներ հարուցելու ներուժ», այստեղ Աքչամը նկատի ունի 2019-ի հոկտեմբերի 30-ին եւ դեկտեմբերի 12-ին Ներկայացուցիչների պալատի եւ Սենատի հաջորդաբար ընդունած բանաձեւերը, որոնք լինելով բավականին հագեցված, ԱՄՆ-ի նախագահին միջազգային ասպարեզում պարտավորեցնում են նպաստել Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու պայքարել ժխտողականության դրսեւորումների դեմ, իսկ ներպետական իրավունքն էլ ներառում է պետության հետ ԱՄՆ-ի քաղաքացիների, ամերիկյան հասարակական, քաղաքական կազմակերպությունների հարաբերությունները, հետեւաբար պետք է պարտավորեցնող լինեն վերջիններիս համար, այլապես դրանք, ինչպես Աքչամն է ընդգծում, չէին ունենա Թուրքիային իրավաբանական լուրջ խոչընդոտներ հարուցելու ներուժ:

# Ամուլսարի դեմ ամուլ է որեւէ քայլ ու նախաձեռնություն

➩1 Բացի հերթափոխի անդամներից, մյուսները պետք է ապրեն ոչ թե Ամուլսարի տարածքում գտնվող վագոնտնակներում, այլ շատ ավելի հեռու գտնվող հյուրանոցում: Ակտիվիստները պահնորդական ծառայությանն ու ոստիկաններին ստիպեցին ենթարկվել այդ պայմանին, ըստ որի՝ ծառայության ղեկավարը պետք է աշխատակիցների համար Վայոց ձորում կեցության տեղ փնտրի:

Իրավունքի եւ բարոյականության տեսակետից «Լիդիան Արմենիան» աննախանձելի իրավիճակում է հայտնվել արդեն 2,5 տարի: Ընկերությունը միլիոնավոր դոլարների ներդրում է կատարել, գույք ու տեխնիկա բերել Ամուլսար, բայց տեւական ժամանակ մատնված է անգործության, որովհետեւ հանքը շահագործելու կամ շահագործման հեռանկարը մտքից հանելու հստակ դիրքորոշում ու հրահանգ իշխանություններից չի ստացել:

Մի բան հստակ է, որ ակտիվիստներն ու բնակիչներն անզիջում էլ մնալու են: Բողոքի ակցիաների ծավալից ու տրամաբանությունից ելնելով՝ կարելի է համոզվել, որ Ամուլսարի պաշտպաններն անդրդվելի են, նրանք պահնորդներին չեն թողնում անգամ մեկ սանտիմետր առաջ գնալ, բացառել են նրանց բնակությունը Ամուլսարի տարածքում: Ռազմավարական պլանը շատ հստակ ու անվրեպ են մշակել ու հայտարարել . «Ով ուզում է լինի՝ պահնորդ, «Լիդիան», թե վարչապետ, պետք է հաշվի նստեն մեզ հետ»: Համավարակի օրերին նոր պահնորդական խումբ ուղարկելու քայլը նրանք սադրանք են համարում: «Ամուլսարի պահապանների մեջքին կանգնած է գրեթե ամբողջ Ջերմուկ համայնքը եւ տասնյակ հազարավոր մարդիկ ամբողջ Հայաստանից ու աշխարհի տարբեր ծայրերից: Այս մասին են փաստում մոտ 3000 ստորագրություններով հանրագիրը, բազմամարդ ակցիաներն ու հսկայական աջակցությունը, որ այս պայքարին ցույց են տալիս գիտակից մարդիկ»:




Նույն իրավունքի եւ բարոյականության տեսանկյունից կոշտ ու կտրուկ քայլերի մեջ չենք կարող մեղադրել նաեւ Ամուլսարի հարակից տարածքների բնակիչներին եւ ակտիվիստներին: Նրանք մեղադրում են վարչապետ Նիկոլ Փաշինյանին ու փոխվարչապետ Տիգրան Ավինյանին՝ ինչու են թույլ տալիս, որ համավարակի ծանր օրերին «Լիդիան Արմենիան» Ամուլսարի տարածքում տեղաշարժ ու տեղափոխություն նախաձեռնի, չէ՞ որ իրենց դիրքորոշումը հայտնի է վաղուց՝ այդ տարածքում ցանկացած շարժ բողոքի ակցիաների, ընդվզման, մարդկային կուտակումների տեղիք է տալու:

Միգուցե օրեր անց Ամուլսարում կրքերը հանդարտվեն: Կհանդարտվեն, բայց չեն ոչնչանա: Պահնորդական զինված, պրոֆեսիոնալ խմբերից թերեւս ավելի լավ Ամուլսարը հսկում են բնակիչներն ու Ամուլսարի պահապանները: Հակառակ ճակատից չնչին քայլ, անգամ մտքում մշակված ծրագիր, եւ նրանք վայրկենապես տեղում են՝ փաստարկված խոսքով, հիմնավորված պատճառներով, իրադարձություններն ուղիղ եթերով հանրությանը ներկայացնելու պատրաստակամությամբ:

Պարզ է, որ «Լիդիան Արմենիայի» այս քայլն ինչ-որ չափով նաեւ հերթական փորձն էր՝ համավարակի օրերին ստուգելու Ամուլսարի պաշտպանների մարտունակությունը, տրամադրությունը, զգոնությունը: Մի՞գուցե նրանց ուշադրությունը բեւեռված լիներ կորոնավիրուսի կամ սոցիալ-տնտեսական այլ խնդիրների վրա: Բայց ոչ... Բողոքի, ընդվզման հերթական ալիքը քիմիական հերթական փորձի նշանակություն եւ իմաստ ունեցավ նաեւ իշխանությունների համար: Ու բոլորը տեսան, համոզվեցին, որ քիմիական փորձի վերջը պայթյունն է: Մոռացել էին, որ քիմիական նյութերն էլ են նույնը, փորձանոթն էլ, լաբորատորիան էլ:

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Թելմա Էմէն. «Մենք՝ հայերս, իրար բռնելը պէտք է սորվինք»

*Նկարչուհի Թելմա Էմէնին առաջին անգամ հանդիպել եմ 1997-ին, Շուէդիայում ապրածս ամիսներին, այնուհետեւ եւս երկու անգամ՝ Ստամբուլում եւ Ստոկհոլմում: Խիստ դրական, ժպտուն, ջերմագին, պոլսահայ ազնուակիրթ ժառանգականութեամբ օժտուած այդ տիկինն այս տարի դառնում է 75 տարեկան: Նրա տոհմում եղել են ուշագրաւ անձինք: Մեծ հօր հօրեղբայրը՝ Սրապիոն վարդապետ Էմինեանը (1823-1854), եղել է Վիէննայի Մխիթարեան միաբանութեան անդամ, 1853-ին հրատարակել է «Բառագիրք երեքլեզուեան գաղղիերէն-հայերէն-տաճկերէն» աշխատութիւնը: Հայրը՝ բնիկ պոլսեցի Լէոն Անդրէ Էմէնը, ստացել է ճարտարապետի եւ իրաւաբանի կրթութիւն, սակայն ողջ կեանքում աշխատել է դեղերի լաբորատորիայում: Հայրական մեծ մայրը՝ Արաքսի Քիւչիւկեան-Էմինեանը, եղել է հագուստներ ձեւաւորող, իսկ մայրը՝ ծագումով Տրապիզոնից Սոնա Էմէնը (ծնեալ Փիւքիւլեան), եղել է կոսմետոլոգ, նաեւ արհեստավարժ կերպով դաշնամուր է նուագել՝ աշակերտած լինելով պոլսահայ ճանաչուած դաշնակահար Ստեփան Բաբէլեանին:*

*Թելմա Էմէնը միջնակարգ կրթութիւնն ստացել է Բանգալթիի Մխիթարեան վարժարանում եւ Ավստրիական լիցեյում: 1970-1973 թուականներին ուսանել է Ստամբուլի Գեղարուեստից դպրոցում: 1973-ից բնակւում է Շուէդիայում: Տարիներ շարունակ երկու դպրոցում աշխատել է որպէս նկարչութեան ուսուցիչ, միաժամանակ դասաւանդել մեծահասակների դպրոցի երեկոյեան դասընթացներում: Պարբերաբար մասնակցել է շուէդ նկարիչների ցուցահանդէսներին, երեք տասնեակից աւելի անհատական ցուցահանդէսներ է ունեցել Շուէդիայում, Ստամբուլում, Փարիզում եւ Ֆլորիդայում (ԱՄՆ): Աշխատանքները գտնւում են Շուէդիայի, Հայաստանի, Ֆրանսայի, Շվեյցարիայի, Ավստրիայի, Նորվեգիայի, Նիդեռլանդների, ԱՄՆ-ի, Կանադայի, Եգիպտոսի, Թուրքիայի, Քուվէյթի անհատական հաւաքածուներում...*

*«Թելմայի արվեստը բոցի խաղ է, երեւակայութեան, գոյնի եւ մոտիվի խաղ: Նա իր կտաւները ներկայացնում է որպէս բանաստեղծական գերիրապաշտութիւն: Թելմայի հիմնական մոտիվներն են մարդկութիւնը, նրա կեանքը, ճակատագիրը: Նրա նկարներում առկայ է ազատութեան զգացումը եւ հեգնանքը շրջապատող աշխարհի նկատմամբ»,- գրել է Շուէդիայի կենտրոնական թերթերից «Սվենսքա դագբլադեդը» 1984 թուականին:*

*Թելմա Էմէնի հետ իմ զրոյցում աշխատել եմ պահպանել նրա մայրենի պոլսահայ բարբառը...*

**-Սիրելի Թելմա, ինչպէ՞ս դարձար նկարիչ:**

-Նկարել սկսած եմ վեց տարեկանէս: Սկիզբները ջրաներկով կը նկարէի: Յետոյ հայրիկս ջրանկարներս ցոյց տուաւ թուրք ծանօթ գծագրիչի մը: Ան չհաւատաց, որ միտքէս նկարած եմ ատոնք: Յետոյ Պոլսոյ Գեղարուեստի ակադեմիայէ շրջանաւարտ Անահիտ Աբգարեանէն սորվեցայ իւղաներկի թեքնիքը: Առաջին ցուցահանդէսս Կեդրոնական վարժարանի մէջ էր, 1969-ին, ապա միւս տարի՝ «Մոտըրն Կալէրի», ուր փրոֆ. Շերեֆ Աքտիքին ծանօթացայ:

**-Իսկ ինչպէ՞ս յայտնուեցիր Շուէդիայում:**

-Փրոֆեսոր Աքտիք տունս կու գար եւ կը դիտէր նկարներս: Օր մը ըսաւ. «Աղջի՛կս, դուն Եւրոպա պէտք է երթաս»: Իր այս խօսքին վրայ հայրիկս Վենետիկի Մխիթարեաններու Սուրբ Ղազար կղզիին վանքը հեռաձայնեց ցուցահանդէսի համար: Եւ այսպէս նախ Վենետիկ, յետոյ Վիեննա գացի: Մխիթարեաններուն վանքէն վարդապետի մը միջոցաւ 1973-ի հոկտեմբեր 3-ին Վիեննայի ակադեմիային սրահին մէջ ցուցահանդէսի օր առի: Երեք ամիս ժամանակ ունէի: Դպրոցէն ամէնէն մոտեռն ընկերուհիս, որ Շուէտի Հալմսթադ քաղաքը փոխադրուած էր, իր քովը հրաւիրեց, ետքն ալ զիս համոզեց Հալմսթադի մէջ ցուցահանդէս մը բանալու: Զատեցի 43 նկար եւ ցուցահանդէսը բացինք Հալմսթադի շատ համբաւաւոր պատկերասրահի մը մէջ: Սակայն բացումին երկրորդ օրը ցուցասրահ երթալուս՝ պարապ պատերու դէմ գտնուեցայ: Ըսին, թէ հոլանտացի հաւաքորդ մը բոլորը գնած է, սակայն վերջը ո՛չ 43 նկարներս տեսայ, ո՛չ ալ անոնց դրամը: Ասոր սպասումով Շուէտ մնացի ու մինչեւ հիմա հոս եմ:

**-Իսկ մեզ թւում էր, թէ Եւրոպայում նման բաներ չեն լինում... Ի՞նչ կասես այսօրուայ շուէդական նկարչութեան մասին:**

-Շատ մութ ոճ մը ունին եւ միշտ ուրիշ մեծ գծանկարիչներու շուքին տակն են: Ինչպէս առհասարակ Արեւմուտքի մէջ, մաքուր, բառին իսկական առումովը նկարչութիւն չկայ նաեւ Շուէտի մէջ: Արդի շուէտական գծագրութիւնը իմփուլս մըն է: Նկարիչները ճամբայ մը չունին իրենց միտքին մէջ, կը գծեն առանց գիտնալու՝ վերջը ի՞նչ պիտի ըլլայ: Բան մը մէջտեղ ելլէ՝ աղէկ, չելլաւ՝ վրան նորը կը գծեն: Եւ այսպէս շարունակ: Եթէ նկար մը երկար ատեն չյաջողին վաճառել՝ վրան նորը կը գծեն, եթէ ասիկա ալ չվաճառուի՝ ուրիշ մը վրան կը գծեն եւ այսպէս շարունակ...

**-Իսկ Թելմա Էմէնն ի՞նչ է արտայայտում իր նկարներում:**

-Տարբեր բաներ: Օրինակ, մարդուս ազատութիւնը խանգարող արարքներու հետ իմ անհաշտութիւնս: Ես իմ դարուս մարդն եմ եւ կ՛ուզեմ, որ ինծմէ ետքը մարդիկ գործերս դիտելով՝ գիտնան, թէ այս ժամանակներուն մարդիկ ա՛յս խնդիրները ունեցած են... Իմ չորս պատիս մէջ սեփական փիլիսոփայութիւնս, սեփական քաղաքականութիւնս կը վարեմ, ուրիշները ընդունին՝ աղէկ, չընդունին՝ իրենց գործն է: Նկարչութիւնը մէկ մասս է, պզտիկութեանս ատենէն ինծի հետ քալող բան մը... Կեանքը կը սիրեմ, մարդիկը կը սիրեմ, աշխարհի անարդարութիւններու հանդէպ չեմ կրնար անտարբեր մնալ, եւ անոնց վրայ ալ մոթիվներս մէջտեղ կ՛ելլեն...

**-Իսկ ի՞նչ եղանակով ես ստեղծագործում:**

-Ինծի համար նախ գաղափարը կը ծնի, ետքը՝ վերնագիրը, որմէ ետքն ալ՝ պատկերը: Շատ անգամ գաղափար մը կրնայ միտքիս մէջ երկար մնալ, հասուննալ, յանկարծ մէկէն կը սկսիմ գծել: Նոյն ատեն կեանքիս մէջ հոգեկան ներդաշնակութիւն պէտք է ունենամ նկար մը ստեղծելու համար, ըլլայ մեծ թէ փոքր: Անշուշտ, մեծ կտաւներուս համար էսքիզներ կ՛ընեմ: Միայն աբստրաքտ նկարներս կը ծնին յանկարծակի. չես կրնար աբստրաքտ նկարի մը համար էսքիզ ընել... Արդէն մարդուս իմփուլսն ինքնին աբստրաքտ է...

**-Որպէս ուսուցիչ ե՞րբ ես ապրել ամենամեծ գոհունակութիւնդ:**

-2001-ին ամբողջ աշխարհի դպրոցներուն տուած էին «Յառաջիկայի նաւը» կառուցելու խնդիրը, ուր պիտի ցուցնէին, թէ ի՛նչն է կարեւորը յառաջիկայի համար: Ստոկհոլմի Ռեոգսվէդի դպրոցը ինծի յանձնարարեց կատարել այդ ինսթալասիոնը: Կը խորհիմ, որ համագործակցութիւնը կարեւոր է մեզի համար: Ներկայացուցի իմ գաղափարս՝ կապոյտ ժապաւէն մը գծել մեր Վանթեորի թաղապետարանի շուրջը, որ ըրի արուեստակցիս՝ Քյէլ Օլսոնին հետ, 15 քիլոմեթր շրջանով: Բացումին օրը Վանթեոր թաղի դպրոցներուն բոլոր աշակերտները ձեռք ձեռքի տուած կեցան կապոյտ ժապաւէնին վրայ: Ամբողջ աշխարհէն մասնակիցներ կային, նաեւ Հայաստանէն, որ հաւաքուեցանք Ստոկհոլմի «Էրիքսոն գլոբ» արենայի մէջ: Բոլորը 48 ժամուան մէջ շինեցին իրենց ինսթալասիոնները: Երբ վերջացուցին իրենց գործը, ես 15 քիլոմեթր երկարութեամբ ժապաւէնով կապեցի բոլորին աշխատանքները: Նոյն ատենը «Էրիքսոն գլոբ» արենայի մէջ իմ աշակերտներս ցոյց տուին իրենց իւղաներկ նկարները: Աւելի քան 1000 պատկեր գծած էին Ռեոգսվէդ եւ Սնեոսէթրա դպրոցներու իմ աշակերտներս՝ առաջին եւ իններորդ դասարաններէն:





**-1984-ին նկարեցիր քո «Մոնա Լիզան»՝ ամերիկուհի ուսումնասիրող Լիլեան Շուարցից առաջ առաջադրելով այն վարկածը, թէ այն իրականում կարող է եղած լինել Լեոնարդոյի ինքնանկարը...**

-Տակաւին 1978-ին «Մոնա Լիզա» մը գծեցի, ուր կնոջ ետեւի փէյզաժը կարծես Մոնա Լիզայի մէջէն կ՛անցնէր: Օր մը սենեակին մէջ կիսամութ էր, նկարիս մէջ միայն վառ գոյները կ՛երեւային: Այն ատեն էր, որ երեւեցաւ Լեոնարդո դա Վինչիին յայտնի ինքնանկարը: Շատ զարմացայ, միտքս զբաղիլ սկսաւ այս խնդրով, թէ արդեօք Լեոնարդոն ինքզինք չէ՞ նկարած Մոնա Լիզայի տեսքով: Եւ շուտով ճամբայ մը գտայ վարկածս ապացուցելու: Լեոնարդոյին ինքնանկարը նկարեցի թուղթի մը վրայ, ետքը թուղթը շրջեցի եւ միւս կողմի վրայ դէմքի քանի մը գիծերը քաշելով՝ մէջտեղ եկան Մոնա Լիզային ծանօթ գիծերը... Ասկէ ետք շուէտական հեռատեսիլէն եկան, նկարեցին այս պատմութիւնը, բայց ետքը ինծի լուր տուին, թէ պիտի չցուցնեն, իբր Մոնա Լիզայի արժէքը այդպէսով պիտի իյնայ եղեր: Ասկէ տարի մը ետք շուէտական բոլոր թերթերը գրեցին, թէ ամերիկուհի մը համակարգիչով փորձած է ցուցնել, թէ Մոնա Լիզա Լեոնարդոյին ինքնանկարն է, բան մը, որ ես առանց համակարգիչի արդէն մտածած էի...

**-Իսկ ի՞նչ տեղ ունի Թելմա Էմէնը այսօրուայ շուէդ նկարչութեան մէջ:**

-Ես Շուէտի արուեստագէտներու միութեան անդամ եղած եմ դասակազմի որոշումով: Եւ միակ դրսեցին եմ միութեան մէջ: Շուէտ նկարիչներու եւ արուեստասէրներու շրջանակ մը զիս կը ճանչնայ, անոնց համար երկար ատեն Թելմա Էմէնը սեւ մազերով իւրայատուկ կին մըն է, տեսակ մը արեւելեան հով: Նոյնը կրնանք ըսել նկարներուս մասին: Նկարելու մէջ խորհելուս կերպն արեւելեան է, շուէտացիի գաղափարով՝ շատ տարբեր կը գծեմ իրենցմէ: Ինչպէս կը տեսնէք, գործածած գոյներս շատ ալ վառ չեն, սակայն շուէտացիի աչքին ատոնք շատ վառ են, եւ այս պատճառով զիս արեւելեան կը նկատեն: Իրենց նկարչութեան մէջ մեծ մասը պաղ գոյներ են՝ մոխրագոյն, սեւ-ճերմակ... իսկ ինծի համար սեւը գոյն չէ, ճերմակը գոյն չէ, այլ՝ գոյնի բացակայութիւն: Յաճախ զիս չեն հասկնար, ուրիշ մեկնաբանութիւններ կու տան նկարներուս: Ես կը հասկնամ, որ շուէտացին երբեք նկարչութեան նիւթ չի դարձներ, օրինակ, ամուսնական անհաւատարմութիւնը: Նոյն ատեն, ես անտարբեր եմ, ըսենք, վիքինգներու առասպելին նկատմամբ, ցանկութիւն չունիմ գծել զանոնք...

**-Դու կամ քննադատները որեւէ հայկական բան տեսնո՞ւմ են գործերիդ մէջ:**

-Նկարներս ուղղակի հայկական չեն, ես ամբողջ աշխարհի դժուարութիւնները մարդասիրական ոգիով մը կը նկարեմ, սակայն գոյներուս յօրինուածքին մէջ հայկական ջերմութիւնը կը ծագի...

**-Բացառութիւն է, թերեւս, քո «Յարգանքի տուրք Գրետա Գարբոյին եւ Ռուբէն Մամուլեանին» կտաւը, որտեղ այդ հոլիվուդեան մեծութիւններին պատկերել ես Շուէդիայի եւ Հայաստանի դրօշների խորքին... Գիտեմ, որ Էմինեան ընտանիքը հետաքրքրական պատմութիւն ունի... Մալթայում նշանաւոր Էմինեաններ կան, ազգակա՞ն են:**

-Այո, աղջկաս՝ Մէտիին հետ Մալթայի Էմինեաններու հետ յարաբերութեան մէջ մտանք: 1960-ականներուն Վենեսուելայէն Էմինեան մականունով մէկը հայրիկիս այցելեց Պոլսոյ մէջ եւ հօրս տուաւ թուղթեր իրենց տոհմածառին մասին, որ մինչեւ հայկական թագաւորութեան կը հասնէր: Մեծ-մեծ-մեծ հայրիկներս թագաւորին ամէնէն մօտ զինուորներն են եղեր, որ Մալթա եկած են, յետոյ անոնցմէ մաս մը Թուրքիա անցած է: Այս ամբողջ թուղթերը հայրիկս պահած էր, սակայն անոր մահէն վերջ կորսուեցան... Ընտանիքիս մէջ շատեր մաթեմատիկոս կամ գծագրիչ են եղեր: Քոյրս մաթեմաթիկոս է, իսկ ես՝ գծագրիչ: Հիմա Թուրքիոյ Էմինեաններու ճիւղէն միայն ես մնացած եմ, աղջիկս եւ անոր աղջիկը: Եւ թէեւ թոռնիկիս հայրը շուէտացի է, սակայն մենք իր մականունն ալ Էմէն գրեցինք՝ քիչ մը աւելի երկարացնելու համար մեր ընտանիքին անունը...

**-Երբ 1973-ին Շուէդիա եկար, շատ քիչ հայ կար երկրում: Հիմա նրանց թիւը մեծացել է: Շուէդաբնակ հայերը ճանաչո՞ւմ են քեզ:**

-Կան, որ կը ճանչնան: Օրինակ, տարիներ առաջ ես գծեցի Կարօ Յակոբեանի բանաստեղծութիւններու գիրքին կողքը: Քանի մը տարի առաջ Հայաստանի դեսպանատունը ցուցահանդէս ունեցայ: Դեսպան Արտակ Ապիտոնեանը շատ լաւ դիմաւորեց, քանի մը հայեր եկան: Այս տարի ունեցած ցուցահանդէսիս համար նոր դեսպանին հրաւէրագիր տուի, սակայն դժբախտաբար ձայն-ձուն չելաւ: Մենք՝ հայերս, իրար բռնելը պէտք է սորվինք...

**-Իսկ ինչի՞ վրայ ես աշխատում հիմա:**

-Հիմա ես... գիրք մը կը գրեմ: Ասիկա ըլլալու է ֆիքսիոն մը շուէտերէնով իմ կեանքիս պատմութեան մասին: Ան կը սկսի 19-րդ դարուն, ինչպէս թիւ մէկ աշխարհին ընտանիքը կը հսկէ թիւ երկու աշխարհին ընտանիքները...

Պրոֆ. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# Հայերը պետութենաստեղծ ազգ

*Սկիզբը՝ նախորդ համարում եւ վերջ*

**3. Ֆաթիմյան խալիֆայություն: Բադր Գամալ ալ-Արմանին: Ֆաթիմյան խալիֆայությունը պատմության մեջ հայտնվեց 909թ., որը ստացավ Ֆաթիմյան անվանակոչումը Մուհամմադ** մարգարեի դստեր Ֆաթիմայի անունից: Ֆաթիմյան խալիֆայությունը հաստատվեց Հյուսիսային Աֆրիկայում եւ նրա կենտրոնը դարձավ Եգիպտոսը: Նրան միացվեցին Իֆրիկիյան, Ալժիրը, Մաղրիբը, Սիրիան, Արաբիան, Իրաքի որոշ շրջաններ, Հիջազը Մեքքայով եւ Մադինայով: Դա դարձավ մի կայսրություն, որը ձգվում էր Ատլանտյան օվկիանոսից մինչեւ Կարմիր ծով: Ֆաթիմյան խալիֆաները խաղալիք դարձան էթնիկական տարբեր խմբերից կազմավորված իրենց գվարդիայի, առաջին հերթին՝ թուրքերի ձեռքում: Ֆաթիմյան խալիֆայի՝ Մուսթանսիրի զինված ուժերը եւ թիկնապահ գնդերը կազմված էին բերբերների, սուդանցիների եւ թուրքերի գումարտակներից: Նրանք ոչ միայն հաշտ չէին, այլեւ բացահայտ թշնամանք էին տածում միմյանց նկատմամբ: Անելանելի դրության մեջ հայտնված խալիֆա ալ-Մուսթանսիրը 1073թ. հարկադրված դիմեց Ակրի կառավարիչ հայազգի Բադր ալ-Գամալ ալ-Արմանիի օգնությանը, հրավիրելով նրան եւ նրա հայկական գնդերը Կահիրե, անհնազանդ թուրքական գվարդիականներին սանձահարելու եւ երկրում կարգ ու կանոն հաստատելու համար: Բադր ալ-Արմանին ընդունեց խալիֆայի հրավերը եւ հայերից կազմված իր քսանհազարանոց զորքով 1074թ. մտավ Կահիրե: Նա շատ արագ եւ փայլուն կերպով իրականացրեց իր առաքելությունը, ջախջախեց թուրքական զորքերին, պատժեց նրանց հրամանատարներին եւ նրանց հետ համագործակցած եգիպտական պաշտոնյաներին:

Բադր ալ-Արմանին եւ նրա քսան հազարանոց հայոց զորքը Մերձավոր Արեւելքում էր հայտնվել Սասունից:

Ալ-Մուսթանսիրը Բադր ալ-Արմանիին օժտեց ամենալայն պետական եւ ռազմական լիազորություններով : Նա նշանակվեց վազիր եւ խալիֆիական զորքերի ընդհանուր հրամանատար, ինչպես նաեւ իսլամական միսիոներական կորպուսի ղեկավար:Նրա ձեռքում կենտրոնացվեց ամբողջ իշխանությունը եւ նա 20 տարի ՝ 1074-1994թթ. մինչեւ իր մահը եղավ երկրի փաստական եւ անսահմանափակ իշխողը: Նա կարողացավ երկիրը դուրս բերել քաոսային վիճակից , հաստատել օրինականություն եւ նոր շունչ փչել հոգեվարքի մեջ հայտնված Ֆաթիմյան խալիֆայությանը:

Նրա մահից հետո, որը տեղի ունեցավ 1094թ., խալիֆա Մուսթանսիրը վազիրի եւ զորքերի հրամանատար նշանակեց Բադր Գամալ ալ-Արմանիի որդուն, հայազգի Մելիք ալ-Աֆդալին, որը հայտնի էր նաեւ Շահնշահ անունով: Նա իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ բարձրագույն իշխանությունը եւ դարձավ Ֆաթիմյան խալիֆայության իրական կառավարողը, ձեւական դարձնելով խալիֆայի պաշտոնը:

Այսպիսով, մոտ կես դար Ֆաթիմյան խալիֆայության փաստացի կառավարողները եղան երկու հայազգի ականավոր պետական, քաղաքական, ռազմական գործիչներ , հայր եւ որդի Բադր Գամալ ալ-Արմանին եւ Աֆդալ Շահնշահը, որոնք անջնջելի հետք են թողել Ֆաթիմյան խալիֆայության, ի մասնավորին՝ Եգիպտոսի, պատմության մեջ: Նրանց կառավարման տարիներին Եգիպտոսը դարձավ օրինակելի երկիր, զարգացած պետություն, որին նախանձով էին նայում հարեւան երկրները: Նրանց դերը հենց այդպես է գնահատվում պատմագրության մեջ:

Հետագայում եւս , հատկապես XIX դարի երկրորդ կեսերին, հայ պետական եւ քաղաքական գործիչներն անջնջելի հետք են թողել Եգիպտոսի պատմության մեջ: Բավական է նշել, որ XIX դարի 80-ականներին Եգիպտոսի առաջին վարչապետը եղել է Նուբար Նուբարյանը՝, որն անգնահատելի դեր է խաղացել Եգիպտոսի անկախության եւ ինքնության պահպանման գործում: Բացի դրանից, դարձյալ XIX դարում, հայերը բազմիցս զբաղեցրել են Եգիպտոսի արտաքին գործերի նախարարի պաշտոնը եւ կարեւոր դեր խաղացել կառավարական համակարգի այլ բնագավառներում:

**4. Կիլիկիայի հայկական թագավորությունը: Ռուբինյաններ եւ Հեթումյաններ:**

1045թ., Բագրատունիների անկումից հետո, սկսվեց հայերի արտագաղթը,այդ թվում եւ Կիլիկիա: Արտագաղթողների մեջ էին Բագրատունիների շառավիղ Ռուբինյանները, որոնցից ամենաաչքի ընկնողը Ռուբեն իշխանն էր: Նա Բագրատունիների վերջին թագավոր Գագիկ II մերձավորներից էր: Ռուբեն իշխանը 1080թ. Կիլիկիայում հիմնեց հայկական պետությունը, որը սկզբում իշխանապետություն էր, իսկ 1198թ. վերածվեց թագավորության եւ անվանակոչվեց Կիլիկիայի հայկական թագավորություն : Նրա առաջին թագավորը եղավ Լեւոն II Մեծագործ Ռուբինյանը: Հայոց կաթողիկոսի նստավայրը տեղափոխվում է Կիլիկիա եւ հաստատվում Հռոմկլա քաղաքում:



*«Լեւոն թագավոր հայոց», ոսկեդրամ՝ Կիլիկիայի զինանշանով:*

Կիլիկիայի հայկական պետությունը գոյություն է ունեցել նրա համար շատ բարդ միջազգային իրադրության պայմաններում: Նա շրջապատված էր տարբեր պետություններով , որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր տիրանալ Կիլիկիային: Դրանց մեջ էին Բյուզանդական կայսրությունը, Ռումի կամ Իկոնիայի Սելջուկյան սուլթանությունը, Հռոմի պապը, մոնղոլները եւ եգիպտական մամլուքները: Կիլիկիայի հայ թագավորները ստիպված էին մեծ խիզախություն եւ դիվանագիտական բարձր հմտություն ցուցաբերել հայկական պետական նավի համար անվտանգ նավարկություն ապահովելու համար: Եվ, ի պատիվ նրանց, երկար ժամանակ հիմնականում հաջողվում էր լուծել այդ խնդիրը, որի փայլուն ապացույցն է Կիլիկիայի հայկական պետության մոտ երեքդարյա գոյությունը ( 1080-1375թթ):

1226 թ. գահը Ռուբինյաններից անցավ Հեթումյաններին: Հարաբերությունները Եգիպտոսի եւ Կիլիկյան Հայաստանի միջեւ այդ շրջանում եւ հետագա տարիներին լարվում են: Եգիպտական մամլուքները ներխուժում են Կիլիկիա, գրավում Դաշտային Կիլիկիան , իսկ 1375թ. , համառ դիմադրությունից հետո, գրավեցին Կիլիկիայի հայկական թագավորության մայրաքաղաք Սիսը:



*Միքայել Լոռիս Մելիքով, Ռուսաստանի վարչապետ եւ դիկտատոր:*

Այդ թվականը համարվում է Կիլիկիայի հայկական թագավորության անկման տարեթիվը:

**5. Հայազգի Միքայել Լոռիս-Մելիքովը Ռուսաստանի վարչապետ, դիկտատոր: Հայերը XIX դարում ազդեցիկ դիրքեր են ունեցել ցարական Ռուսաստանում, երբ ռուսական ցար Ալեքսանդր II կայսրության ներքին գործերի նախարար նշանակեց Ռուսաստանի պետական Դումայի անդամ հայազգի զորավար, գեներալ Միքայել Լոռիս-Մելիքովին, օժտելով նրան բացառիկ իշխանությամբ: Նա փաստորեն դարձավ Ռուսաստանի վարչապետ դիկտատոր( 1880-1881թ.), կայսրության** երկրորդ դեմքը՝ ցարից հետո: Լոռիս-Մելիքովը ցարին է ներկայացնում վարչական եւ տնտեսական վերափոխումների մի ընդարձակ ծրագիր, ըստ որի ցարական Ռուսաստանը ինքնակալ միապետությունից վերածվում էր սահմանադրական միապետության: Ցարը հավանություն է տալիս Լոռիս -Մելիքովի այդ ծրագրին եւ նույնիսկ 1881թ.մարտի 13-ին ստորագրում համապատասխան հրամանագիր (указ ), այսինքն միայն մի քայլ էր մնացել Ցարական Ռուսաստանը սահմանադրական միապետության վերածվելու համար, սակայն նույն օրը՝ 1881թ. մարտի 13-ին, Ալեքսանդր II ահաբեկչության զոհը դարձավ: Նրան հաջորդած Ալեքսանդր III չեղյալ հայտարարեց իր հոր բարեփոխումների վերաբերյալ բոլոր հրամանները, իսկ զորավար Լոռիս-Մելիքովը հեռացավ քաղաքական ասպարեզից եւ ընդհանրապես Ռուսաստանից եւ բնակություն հաստատեց Ֆրանսիայում, Նիցցա քաղաքում; Նա մահացել է 1888թ. եւ թաղվել Թբիլիսիում, հայկական գերեզմանոցում:

**6. Հայերի նշանակալի դերը շահական Իրանի պետական եւ քաղաքական կյանքում:**

Բացառիկ է եղել հատկապես Եփրեմ խանի (Դավթյան) դերակատարումը Իրանի 1905-1911թ. Սահմանադրական հեղափոխության կազմակերպման, ղեկավարման եւ Իրանի շահի տապալման գործում: Եփրեմ խանը եղել է իրանական հակաշահական ուժերի գլխավոր կազմակերպիչը եւ ղեկավարը: Այդ ուժերի ճնշման տակ Իրանի շահ Մոհամեդ Ալին հրատարակեց սահմանադրություն մտցնելու հրովարտակ: Բայց դա լոկ խորամանկ քայլ էր: 1908թ. հունիսին շահը հեղաշրջում կատարեց եւ ցրեց մեջլիսը՝ պառլամենտը: 1909թ. հուլիսին Գիլանի ֆիդայիները, հայ կամավորները եւ սահմանադրականները Եփրեմ խանի եւ Ռեշտի նահանգապետ Սիփահդարի ղեկավարությամբ, բախտիարները՝ Սարդար Ասադի գլխավորությամբ արշավեցին Թեհրան, գրավեցին այն եւ գահընկեց արին շահին: Եփրեմ խանը նշանակվեց Թեհրանի ոստիկանապետ: Հաղթողները ստեղծեցին ժամանակավոր կառավարություն: Եփրեմ խանը նշանակվեց Իրանի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար, դիկտատոր, որը վերականգնեց սահմանադրությունը: Շարունակելով պայքարը, հեղափոխական ջոկատները , հայ կամավորներն ու ֆիդայիները Եփրեմ խանի հրամանատարությամբ հակահարված տվեցին շահին եւ նրան օգնության հասած եղբորը եւ կանխեցին միապետության վերականգնումը: Եփրեմ խանի հեղինակությունը շատ բարձր էր, նրան համարում էին Իրանի հերոս եւ տաղանդավոր զորավար: Ընդհանրապես այդ ժամանակ շատ բարձր էր իրանահայերի հեղինակությունը: Իրանի ականավոր պատմաբան Էբրահիմ Սաֆայի վկայությամբ «Իրանական հեղափոխության 24 նշանավոր գործիչներից 16-ը հայեր էին»:

Ցավոք, Եփրեմ խանը սպանվեց 1912թ. մայիսի 6-ին Համադանի շրջանում տեղի ունեցած մարտերում : Նրա մարմինը հանգչում է Թեհրանի հայկական Հայկազյան դպրոցի բակում: Իրանական հեղափոխության ակտիվ մասնակիցներից էր նաեւ հայ ֆիդայի Քեռին՝ Արշակ Գաֆավյանը եւ ուրիշներ:

Մասնագետների կարծիքով Իրանական հեղափոխությունը XX դարի սկզբին առաջին հեղափոխությունն էր Արեւելքում: Նա Իրանի բազմադարյան պատմության մեջ ամենակարեւոր իրադարձություններից մեկն էր, որը խոշոր հետք է թողել Իրանի պատմության մեջ:

Իրանական հեղափոխությունը իր հետեւանքներն ունեցավ նաեւ հայության համար: Շնորհիվ իրանական հեղափոխության հայերն ընտրվեցին տեղական ինքնավարական մարմիններում՝ էնջումեններում , եւ իրավունք ստացան երկու պատգամավոր ունենալ Իրանի մեջլիսում: Այդ իրավունքը մինչեւ օրս պահպանվում է, եւ հայերը երկու դեպուտատներ ունեն իրանական մեջլիսում, մեկը Հյուսիսային Իրանի, իսկ մյուսը Հարավային Իրանի հայության կողմից: Դրանով իսկ իրանահայերը պահպանում են իրենց պետութենաստեղծ գործունեությունը Իրանում: Շատ մեծ եւ կարեւոր է եղել Միրզա Մելքում խանի դիվանագիտական գործունեությունը, բարձր դիրքեր գրավելով այդ ոլորտում: Նա եղել է Իրանի դեսպանը Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, պարսկական դեսպանատան խորհրդական Ֆրանսիայում,Պարսկաստանի դեսպանորդ Հռոմում:Նա Իրանն արժանապատվորեն ներկայացրել է միջազգային համաժողովներում, ինչպես Բեռլինի կոնգրեսը (1878թ.), որտեղ նա պաշտպանել է Պարսկաստանի շահերն ընդդեմ Թուրքիայի եւ այլն:

Միրզա Մելքում խանը մահացել է 1908թ., խոշոր հետք թողնելով Պարսկաստանի քաղաքական, դիվանագիտական եւ գիտական-գրական կյանքում:

**7. Լիբանանահայերի ներդրումը Լիբանանի անկախ պետության ստեղծման եւ պահպանման գործում:**

Այն տարածքը, որ կազմում է ժամանակակից Լիբանանը, յուրահատուկ կարգավիճակ ուներ Օսմանյան կայսրության կազմում: 1861թ. ընդունված Օրգանական ստատուտի համաձայն ստեղծվել էր Լեռնալիբանանի ինքնավար մարզը՝ մութասարիֆությունը, որը կառավարում էր օսմանյան սուլթանի կողմից նշանակվող կաթոլիկ քրիստոնյա մութասարիֆը՝ կառավարիչը:

⇨6

ՄԱՆՈՒԿ ԱՐԱՄՅԱՆ

# Հայաստանի տնտեսական անկումը խորանում է, բյուջեի եկամուտները՝ նվազում



Վիճակագրական կոմիտեի հրապարակման համաձայն, այս տարվա հունվար-մայիս ամիսներին Հայաստանում տնտեսական ակտիվության անկումը կազմել է 3,9 տոկոս: Ընդ որում, հարկ է նշել, որ անկման տեմպը սկսվել է դեռեւս մարտ ամսին: Տնտեսական անկումն ու մարդկանց սոցիալական կացության վատթարացումը հետեւանք է երկու հիմնական գործոնների՝ կորոնավիրուսով պայմանավորված առողջապահական եւ տնտեսական ճգնաժամ եւ իշխանությունների ապիկար կառավարում՝ հատկապես կորոնավիրուսի համաճարակի ժամանակ: Այսպիսով, ի՞նչ է տեղի ունեցել այս տարվա մայիս ամսին տնտեսության եւ պետական բյուջեի հարկային եկամուտների հետ:

## Կանխատեսվող տարեկան տնտեսական անկման տեմպն արդեն անցել ենք

Նախ նշենք, որ մայիսին ապրիլ ամսվա նկատմամբ աճ կա բոլոր ցուցանիշներում, ինչի պատճառն այն է, որ ապրիլին տնտեսական գործունեության համատարած սահմանափակումները մայիսի երկրորդ կեսից աստիճանաբար վերացվեցին: **Սակայն, ինչ վերաբերում է նախորդ տարվա մայիսի հետ համեմատությանը, ապա տնտեսության բոլոր ճյուղերում համատարած անկում է գրանցվել: Մասնավորապես, այս տարվա մայիսին 2019 թ.-ի մայիսի համեմատ տնտեսական ակտիվության անկումը կազմել է 12,8 տոկոս:** Ըստ տնտեսության ճյուղերի, արդյունաբերությունում մայիսին անկումը կազմել է 3,9 տոկոս, շինարարությունում՝ 27 տոկոս, առեւտրում՝ 18,4 տոկոս, ծառայություններում՝ 19,4 տոկոս, իսկ գյուղատնտեսության ցուցանիշները հրապարակվում են եռամսյակը մեկ:

Հունվար-մայիսի ցուցանիշներում միայն արդյունաբերությունում է որոշ՝ 2,4 տոկոս աճ պահպանվում, այն էլ հանքարդյունաբերության շնորհիվ: Շինարարության ծավալները կրճատվել են 24,4 տոկոսով: Առեւտրում անկումը 10,8 տոկոս է, թեեւ առեւտրով զբաղվողներն արդեն երկու տարի է, ինչ շրջանառության եւ եկամուտների նվազում են արձանագրում: Ծառայություններում անկումը 14,2 տոկոս է:

Տնտեսական անկումն իր արտացոլումն է թողնում նաեւ արտաքին առեւտրի վրա: Այն մայիսին շարունակել է նվազել: Արդյունքում, հունվար-մայիսին արտաքին առեւտրի երկնիշ՝ 11,2 տոկոս նվազում է արձանագրվել: Արտահանումը նվազել է 8,1 տոկոսով, ներմուծումը՝ 12,8 տոկոսով:

Ի դեպ, երբ նշում ենք տնտեսական ակտիվության անկման ոչ հավաստի եւ մեղմացված լինելու մասին, հաշվի ենք առնում նաեւ արտաքին առեւտրաշրջանառության ցուցանիշը, որտեղ կեղծելը դժվար է: Եթե այստեղ անկումը երկնիշ է, ապա տնտեսական անկումը չի կարող դրանից անգամներով ավելի փոքր լինել: Տնտեսական ակտիվության ավելի մեծ անկման մեկ այլ անուղղակի փաստ կարող է լինել պետական բյուջեի եկամուտների ցուցանիշը: Այս անուղղակի ցուցանիշներից կարող ենք եզրակացնել, որ տնտեսական ակտիվության անկումն ավելի խորն է, քան պաշտոնական ներկայացվողը:

**Հիշեցնենք նաեւ, որ 2020 թ.-ի համար կառավարությունը կանխատեսում էր 2 տոկոս տարեկան անկում: Հինգ ամիսների արդյունքում, անգամ ըստ պաշտոնական վիճակագրության, արդեն ունենք 3,9 տոկոս անկում:**

## Հարկային եկամուտների աննախադեպ նվազում մայիսին

Պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվության համաձայն, **մայիս ամսին պետական բյուջե են մուտք գործել գրեթե 83 մլրդ դրամի մոտ հարկային եկամուտներ: Դա պարզապես աղետալի նվազում է:**

Այդ գումարն ավելի փոքր է, քան սովորաբար ամենաքիչ եկամուտներ ստացվող փետրվար ամսվա հարկային մուտքերը, երբ վճարվում են տնտեսապես ամենապասիվ՝ հունվար ամսվա հարկերը: Այս տարվա փետրվարին դրանք կազմել էին մոտ 90 մլրդ դրամ:

Անցյալ տարվա մայիսի հետ համեմատությունն ավելի ակնառու է ցուցադրում այս տարվա նվազումը: 104 մլրդ դրամ անցած տարվա մայիսին՝ այս տարվա մայիսին դրանից 21 մլրդ դրամով պակաս:

Այս տարվա նախորդող ամսվա՝ ապրիլի 151 մլրդ դրամի համեմատ մայիսին պետական բյուջեի հարկային մուտքերը նվազել են 68 մլրդ դրամով:

**Չափազանց ուշագրավ են բյուջեի «այլ եկամուտներ» տողում այս տարվա հունվար-մայիսին մուտքագրված գումարները:** Բանն այն է, որ հենց այս տողում պետք է երեւան այն գումարները, որը վարչապետ Փաշինյանը խոստանում էր վերադարձնել կոռուպցիայից: Եվ ահա, այս տողում 2020 թ.-ի հունվար-մայիսին մուտքագրվել է 9,8 մլրդ դրամ, անցյալ տարվա նույն ժամանակահատվածի 32 մլրդ դրամի համեմատ:

**Սա նշանակում է, որ ոչ միայն կոռուպցիայից գումար հետ չի բերվել, այլեւ այս տողում մուտքագրվել է նախորդ տարվա համեմատ մոտ 3 անգամ ավելի քիչ եկամուտ:** Սա առավել քան խոսուն ապացույց է այն բանի, թե որքանո՞վ են իրականությանը համապատասխանում «թալանածը վերադարձնելու» մասին երկու տարի շարունակ կրկնվող պոպուլիստական խոստումները: **Այսպիսով, արձանագրենք տնտեսական անկման եւ բյուջեի եկամուտների նվազման կտրուկ տեմպերը եւ դրա խորացման մեծ հավանականությունը տարվա հաջորդ ամիսներին:** Դա լուրջ բարդություններ է առաջացնելու բյուջեով նախատեսված ծախսերի կատարման, այդ թվում աշխատավարձերի եւ կենսաթոշակների վճարման համար: Դրանից խուսափելու համար կառավարությունը շարունակում է մեծացնել արտաքին պարտքը, ինչը նրա ներկայիս ղեկավարի կողմից հաճախակի շահարկվող հարցերից էր մինչեւ իշխանության գալը:

# Հայերը պետութենաստեղծ ազգ

⇨5

Առաջին մութասարիֆ եղավ հայազգի Կարապետ Արթին Դաուդյանը: Այդ կարգավիճակը պահպանվեց մինչեւ 1914թ., երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Օսմանյան կառավարությունը խախտեց Օրգանական ստատուտը եւ իր զորքերը մտցրեց Լեռնալիբանան, պաշտոնանկ անելով Լեռնալիբանանի վերջին քրիստոնյա մութասարիֆ հայազգի Հովհաննես Կույումջյանին: Լիբանանն ընկավ աներեւակայելի ծանր դրության մեջ: Լիբանանի ազատագրումը օսմանյան լծից ավարտվեց 1918թ. աշնանը, որն իրագործվեց անգլիական զորքերի եւ արաբական ապստամբ բանակի միջոցով, որոնք մի շարք ճակատամարտերում պարտության մատնեցին թուրքական բանակներին:

Դաշնակիցների՝ Անգլիայի եւ Ֆրանսիայի Գերագույն Խորհրդի 1920 թվականի որոշումով Լիբանանի կառավարման մանդատը տրվեց Ֆրանսիային: Դա առաջ բերեց լիբանանցիների դժգոհությունը եւ ծայր առան հակաֆրանսիական ելույթներ, որի արդյունքում, ի վերջո, 1943թ. նոյեմբերի 8-ին վերացվեց ֆրանսիական մանդատը: Այդ օրը պատմության մեջ մտել է որպես ֆրանսիական մանդատի վերացման, Լիբանանի անկախության եւ ինքնիշխանության հաստատման օր: Լիբանանի առաջին պրեզիդենտ ընտրվեց Բիշարա ալ-Խուրին , իսկ Ռիյադ Սոլիը գլխավորեց անկախ Լիբանանի առաջին կառավարությունը: 1946թ. դեկտեմբերին ֆրանսիական վերջին զինվորը հեռացավ Լիբանանից:

Լիբանանի պետական կառուցվածքի հիմքում դրվեց կոնֆեսիոնալիզմի՝ կրոնա-դավանական սկզբունքը: Ըստ այդ սկզբունքի, Լիբանանի կրոնա-դավանական համայնքներ ճանաչվեցին վեց համայնքներ՝ քրիստոնյա մարոնիների, դրուզների, հայերի, մուսուլման սուննիների, շիաների եւ քրիստոնյա -ուղղափառների համայնքները: Հայերի համայնքը 1970-ական թվականներին կազմում էր մոտ 250 հազար եւ թվաքանակով զիջում էր՝ շիա, մարոնի եւ սուննի համայնքներին , եւ մոտավորապես հավասար էր դրուզ ու քրիստոնյա-ուղղափառ համայնքներին:

Հայերը տեղաբաշխված են Լիբանանի տարբեր շրջաններում , սակայն նրանց հիմնական մասը կենտրոնացված է Բեյրութ մայրաքաղաքում: Մայրաքաղաքն ունի թաղամասեր, որոնք բնակեցված են հայերով, ինչպես Բուրջ Համուդը, Խալիլ Բադավին, Նոր Հաճընը , Աշրաֆիեն, Հայաշենը, Անթիլիասի շրջանը, Զալքան եւ այլն: Զգալի թվով հայեր բնակվում են Զահլեում, Սայդայում, Տրիպոլիում Ալեյում, Բիբլոսում, Ջունիում, Շուֆի, Մեթնի, եւ Քեսրվանի եւ այլ շրջաններում:

Լիբանանահայության մոտ 47 տոկոսը զբաղված է արդյունաբերության ոլորտում, ֆաբրիկաներում, գործարաններում, շինարարության մեջ, պետական ձեռնարկություններում եւ այլն, 45 տոկոսը առեւտրի եւ սպասարկման ոլորտում , 2 տոկոսը գյուղատնտեսության մեջ, 2 տոկոսն էլ կազմում է մտավորականությունը՝ ուսուցիչներ, գրողներ, բժիշկներ, նկարիչներ, երաժիշտներ, 4 տոկոսն էլ պատկանում է արդյունաբերական եւ առեւտրա-ֆինանսական վերնախավին:

Բոլորի կողմից ընդունված է, որ մեծ է հայ համայնքի ներդրումը Լիբանանի առաջընթացի մեջ եւ նա խաղում է նշանակալի դեր արդի Լիբանանի տնտեսական կյանքում:

Մոտավոր հաշվարկներով, քաղաքացիական պատերազմին նախորդած տարիներին հայկական մեծահարուստներին պատկանում էր Լիբանանի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների 18 եւ միջին ու մանր արդյունաբերական ձեռնարկությունների 43 տոկոսը, իսկ երկրի ներմուծման հայ կապիտալի բաժինը կազմել է 10 տոկոս: 60-ական թվականներին Լիբանանի խոշոր արդյունաբերության մեջ ներդրված 375 մլն լիբանանյան լիրայից 125 մլն լիրան կամ 33 տոկոսը պատկանում էր հայ արդյունաբերական կապիտալին;




*Կիլիկիայի հայոց թագավորության զինանշանը՝ կարմիր առյուծով:*

Մեծ է նաեւ հայերի դերակատարումը Լիբանանի պետական- քաղաքական եւ հասարակական կյանքում: Այդ տեսանկյունից արժանի է հատուկ եւ բարձր գնահատականի այն կարեւոր դերակատարումը, այն մեծ կշիռը,որ ունի հայ համայնքը Լիբանանի քաղաքական եւ հասարակական կյանքում՝ որպես կրոնադավանանքային համայնք: Այդ հիմքի վրա յուրահատուկ է նրա գործունեությունը լիբանանյան պետականության զարգացման եւ ամրապնդման ոլորտում: Հայ համայնքը լիբանանյան պառլամենտում ունի դեպուտատական 6 տեղ, որը փոքր թիվ չէ: Բացի այդ, Լիբանանում գործող բավականին բարդ ընտրական համակարգի հետեւանքով , 21 դեպուտատի ճակատագիրը եւս զգալիորեն կախված է հայ համայնքի դիրքորոշումից: Այսպիսով, հայ համայնքը որոշիչ ազդեցություն ունի լիբանանյան պառլամենտի մեկ քառորդի՝ 26 դեպուտատների, ընտրության հարցում:

Հարկ է նշել եւս մեկ կարեւոր հանգամանք: Լիբանանում գործող օրենքների համաձայն Հայ համայնքին պատկանում է մինիստրական երկու պորտֆել: Կառավարության այդ երկու անդամները որպես կանոն ակտիվ գործունեություն են ծավալում Լիբանանի ներքին եւ արտաքին քաղաքականության հարցերում:

Եվ, վերջապես, ակտիվ են նաեւ հայ քաղաքական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, Ռամկավար Ազատական կուսակցությունը եւ Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը:

Այսպիսին է հայերի պետութենաստեղծ ֆենոմենի պատկերը, որն իր անալոգիան եւ զուգահեռները չունի:

ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ
Անվտանգության հարցերով փորձագետ

# «Երկաթյա վարագույրների ետեւում»

## *Միտրոխինի արխիվը. II մաս*

Ոմն **Վասիլի Նիկիտիչ Միտրոխին**, 1922թ. ծնված Ռյազանի նահանգի (ՌԴ) գյուղերից մեկում, որն աշխատում էր ԽՍՀՄ ՊԱԿ-ի առաջին գլխավոր վարչությունում (այժմ ՌԴ Արտաքին հետախուզության ծառայություն) եւ զորացրվել 1984 թվին: Մայոր Միտրոխինը աշխատում էր ԽՍՀՄ հետախուզությունում որպես արխիվարիուս (պահոցի աշխատակից):

1972թ. Առաջին գլխավոր վարչության (հետախուզության) վարչական շենքը Մոսկվայի Լյուբյանկա փողոցից (ԽՍՀՄ ՊԱԿ-ի կենտրոնակայանը, այժմ այդ շենքում է տեղաբաշխված Դաշնային անվտանգության ծառայությունը) տեղափոխվեց մայրաքաղաքի Յասենկովոյի շրջան: Անհրաժեշտ էր որոշակի ուսումնասիրություններ կատարել ՊԱԿ-ի արխիվներում, ընտրել հետախուզությանը վերաբերվող նյութերը եւ տեղափոխել դրանք արդեն Յասենովոյում տեղաբաշխված հետախուզության կենտրոնակայան: Այդ գործի համար ընտրվում են մի խումբ արխիվարիուսներ, այդ թվում եւ Վասիլի Միտրոխինը:

Արտակարգ հիշողության եւ ընդունակությունների տեր Միտրոխինը նյութերը ուսումնասիրելիս եւ առանձնացնելիս հիշողության մեջ պահում է անհրաժեշտ անունները, օպերատիվ կեղծանունները, երկրները, գործունեության դաշտը, «օգնականների» տվյալները, այնուհետեւ աշխատանքից հետո երեկոյան այդ ամենը գրանցում է իր հուշատետրում: Պատկերացրե՛ք, ոչ մի փաստաթուղթ կամ դրա պատճենը չի հանվում դուրս կենտրոնակայանի արխիվից, դա շատ վտանգավոր կլիներ եւ պրակտիկորեն անհնարին: Ամեն ինչ հիշողության մեջ: Նոթատետրերը պահվում էին Միտրոխինի Մոսկվայի բնակարանի եւ ոչ հեռու ամառանոցի թաքստոցներում: Ինչի՞ համար էր դա արվում, մի՞թե մինչեւ 1984 թիվը արդեն ծրագրվում էր դավաճանությունը, մի՞թե արդեն կանխատեսվում էր ԽՍՀՄ փլուզումը, ո՞ր պետության հատուկ ծառայությանը պետք է ապագայում փոխանցվեին պահոցի նյութերը:

Ենթադրել կարելի էր ամեն ինչ, սակայն փաստերը հետեւյալն էին:

1992թ. նոյեմբերի 7-ին Միտրոխինը (ԽՍՀՄ փլուզումից հետո) մեկնում է Ռիգա (Լատվիայի մայրաքաղաքը) եւ, իհարկե, իր հետ դուրս է տանում իր որոշ գրառումներ: Հայտնվելով Ռիգայում՝ Միտրոխինը այցելում է Անգլիայի դեսպանատուն եւ հանդիպում է խնդրում հետախուզության ներկայացուցչի հետ: Սովորական դասական ճանապարհ: Բոլորին հայտնի է, որ դեսպանատների «ծածկի» տակ միշտ կան եւ պետք է լինեն պարտադիր հետախուզության եւ անվտանգության աշխատակիցներ, այդ գործի համար լուրջ պետությունները փող չեն խնայում: Եվ ահա Միտրոխինը գրավում է Բրիտանիայի հետախուզության (Secret Intelligence Service - SIS) կամ «Mi-6»-ի ուշադրությունը: Որոշ ժամանակ հետո Միտրոխինը եւ իր ընտանիքի անդամները ստանում են քաղաքական ապաստան եւ ուրիշ փաստաթղթերի «ծածկի» տակ տեղափոխվում են Լոնդոն:

1995թ. հոկտեմբերի 17-ին Քեմբրիջի համալսարանի ժամանակակից պատմության պրոֆեսոր **Քրիստոֆեր Էնդրյուն** հրավիրվեց SIS կենտրոնակայան, որտեղ նրան հրամցվեցին Մոսկվայից «դուրս բերված» ԽՍՀՄ հետախուզության նյութերը: Պրոֆեսոր Էնդրյուն վաղուց համագործակցում էր հետախուզության հետ (եւս մի փաստ «օգնականի») եւ մեծ փորձ ուներ ԽՍՀՄ-ից փախստականների հետ աշխատելու:

Եվ այսպես, Միտրոխինի նյութերում (որոնք շարունակվում են ուսումնասիրվել նաեւ նրա մահից հետո, Չերչիլի անվան քոլեջում) առկա են հայ հետախույզների, նրանց «օգնականների», այդ թվում եւ Հայ Առաքելական եկեղեցու հոգեւորականների անուններ: Նրանք եղել են «մշակման» օբյեկտներ, «թիրախներ», թե «օգնականներ», այժմ շատ դժվար է եզրակացնել: Միտրոխինը կարող էր սխալվել, վրիպումներ թույլ տալ: Հավաստիացնում եմ ձեզ, ամենատաղանդավոր հետախույզն էլ սխալվում է, չէ՞ որ Միտրոխինը միայն հայկական նյութերով չի աշխատել արխիվում, մշտապես լարված իրավիճակ, վախի զգացում, որ իրեն կարող են հետեւել, գերծանրաբեռնված հիշողություն, ապագայի «մշուշոտ ծրագրեր», հոգեբանական մեծ լարվածություն, երբեմն հայերեն տառերով գրված կեղծանուններ եւ այլն, եւ այլն:

Միտրոխինի նյութերի որոշ մասեր փոխանցվում են նաեւ գործընկեր այլ հատուկ ծառայությունների (նկատի ունեմ արեւմտյան բլոկը) եւ դա օրինական է: Իհարկե, միամտություն է կարծել, որ ԽՍՀՄ հետախուզությունը չէր օգտագործի Խորհրդային Հայաստանում բնակվող հայերի բազմաթիվ կապերը աշխարհասփյուռ հայության հետ: Հատկապես հետախուզությանը հետաքրքրում էին ԱՄՆ-ում, Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում, Իրանում, Իրաքում, նույնիսկ Հնդկաստանում եւ Չինաստանում ապրող հայերը: Եվ հետո չմոռանանք, որ ՊԱԿ-ի տեսադաշտում էին նաեւ այն հայերը, որոնք հայրենադարձվում էին Խորհրդային Հայաստան: Իսկ հիմա հաշվի առնենք, որ, ըստ երեւույթին, Միտրոխինը ուսումնասիրել է 1970-1980թթ. պահոցի նյութերը: Եվ այդ նյութերում օրինակ կար նաեւ այն Մոսկվացի հայի անունը, որը բարեկամական կապեր ուներ Իրանի շահի մտերիմների հետ: Ոչ մի արտասովոր բան չկա այն բանի մեջ, որ ԽՍՀՄ հետախուզությունը պետք է փորձեր օգտագործել այդ անձնավորությանը: Նույն բանը հաստատ կաներ ամերիկացի կամ իրանցի հետախույզը Բրեժնեւի կամ Գորբաչովի կանոնավոր կապերի հետ իրենց երկրներում: Որպեսզի այս աշխատանքը իրականացվեր, Հայաստանի ՊԱԿ-ի հետախուզության շատ աշխատակիցներ հրավիրվում էին աշխատել ԽՍՀՄ ՊԱԿ-ի Առաջին գլխավոր վարչության կենտրոնակայանում: Նրանց հիմնական խնդիրները հայ համայնքներն էին: Ընդ որում նշեմ, որ այդ ուղղությունում աշխատում էին ԽՍՀՄ բոլոր այն ազգերի ներկայացուցիչները, որոնք ունեին համայնքներ արտասահմանում:

Ինչպե՞ս կարող էր Գեւորկ Վարտանյանը վրիպել հայ հետախուզական ռեզիդենտուրայի տեսադաշտից Թեհրանում: Իհարկե չէր կարող, արդյունքում մենք ունեցանք հանրահայտ ոչ լեգալ հետախույզ, Խորհրդային Միության հերոս «Անրին», որը փրկեց «Մեծ եռյակի» կյանքը 1943թ. Թեհրանում:

*Շարունակելի*

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Սով ՀՀ-ում. խուճա՞պ... թե՞ իրատեսություն

Տնտեսության հետ մասամբ առնչություն ունեցող որոշ այրեր, ովքեր նաեւ գործարարներ են որակվում, կարծիք են հնչեցնում, որ մեզանում ընթացող տնտեսվարական գործընթացները մոտեցնում են սով հասկացության ժամանակները: Սթափեցնող է, ուստի փորձենք ծանոթանալ այդ հասկացության ինչ-որ առումով գիտական ձեւակերպմանը: 1980-ին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակած բացատրական բառարանի համաձայն սով-ը հացի ու հացամթերքի սուր պակասն է...

Սույն ձեւակերպման առումով ՀՀ վիճակն արդեն երեք տասնամյակ մտահոգիչից առավել է: Ասվածին յուրօրինակ է արձագանքում ՀՀ տնտեսվարագիտական միտքը, առանց որեւէ փաստարկման նշելով, որ Հայաստան աշխարհամասը երբեւէ հացի առումով անգամ նվազագույն ինքնաբավ չի եղել եւ չի էլ կարող լինել, քանզի ըստ ինչ-ինչ հաշվարկների այդ ինքնաբավություն կոչվածը պահանջում է մեկ բնակչի հաշվով 1 տոննա հացահատիկի արտադրություն. 3 մլն հայաստանցու հաշվով ստացվում է 3 մլն տոննա, որը ՀՀ-ի պարագայում անհնարին է, եւ՝ հարցը փակված է: Իսկ ահա իրականում մեկ բնակչի հաշվով պարենային ցորենի պահանջը 120-160 կգ է, որից կարելի է ստանալ հացի, մակարոնեղենի ու հրուշակեղենի պահանջվող քանակները: Օրինակ՝ թիվ 1 գյուղատնտեսությունն ունեցող ԱՄՆ-ում այս ցուցանիշը 160 կգ է, որի մի մասն արտահանվում է:

Ինչպես շատ դեպքերում, մեզանում նաեւ այս խնդրում, պակասում է մասնագիտական պարզ բարեխղճությունը: Բացեք ՀՍՀ հանրագիտարանի 13-րդ հատորի 284-րդ էջի «Բուսաբուծություն» վիճակագրություն-աղյուսակը եւ կտեղեկանաք, որ ասենք 1940 թվականին ՀՍՍՀ 434 հազար հեկտար դաշտային ցանքատարածքներից 340 հազարի վրա իրականացվել է հացահատիկային մշակաբույսերի ցանքս: Հետպատերազմյան շրջանում, կենտրոնացված պլանավորման առումով, նպատակահարմար է գտնվել ՀՍՍՀ գյուղոլորտը կողմնորոշել այգեգործա-բանջարաբոստանային ուղղությամբ, երաշխավորելով ցորենի անհրաժեշտ քանակների կայուն մատակարարումներ: 1985-ին արդեն հացահատիկ մշակվում էր ընդամենը 135 հազար հեկտար, ցածր 2 տոննա բերքատվությամբ: Արտառոց տարօրինակ է, որ արդեն երեք տասնամյակ հնարավոր չէ մոտենալ հեկտարից 6-8 տոննա ցորենի ստացման ցուցանիշի, որի պայմաններում անգամ 100 հազար հեկտար ցանքը մի բան ավելիով կբավարարի 3 մլն եւ ավելի բնակչության հացամթերքների պահանջը: «Չգիտես ինչու»-ի առումով մի փաստ նշեմ: Հունիսի 11-ին հեռուստաալիքներից մեկով հաղորդում հեռարձակվեց, որի ընթացքում Գրիբոյեդով համայնքի 86-ամյա




ֆերմերը նշեց, որ 10 հեկտար ցորենի ցանքսից նվազագույնը 50 տոննա բերք է ակնկալում, որը կարող է չստանալ հերթական ջրումը չիրականացնելու պարագայում: Ահա այն բազում պատճառներից մեկը, որոնց արհեստական առկայությունը հիմք ու առիթ է տալիս խոսել ՀՀ-ում սովի հնարավոր իրավիճակի մասին:

Առերեւույթ ՀՀ-ում սովի մասին խոսելու անհրաժեշտություն ուղղակի առումով չկա, քանզի համաշխարհային տնտեսությունում բոլոր տեսակի սննդահումքի զգալի քանակների արտադրություն կա: Ըստ որոշ հրապարակումների, բրազիլական լինի թե նորզելանդական, բեռնանավերը կանգնած են Միջերկրական ծովում, պատվիրիր ինչ եւ ինչքան ուզում ես: Ցավոք, այսկերպ չենք կարող գնահատել վիճակը ՀՀ-ում: Թե ինչո՞ւ, ծանոթացեք ստորեւ՝ պարենային զամբյուղի հիմնական մաս կազմող մի այլ սննդատեսակի, հավի մսի օրինակով: 2017-ին այս մսատեսակի համաշխարհային արտադրությունը կազմել է 122 մլն տոննա, 1 բնակչի հաշվով 17 կգ, ՀՀ-ում՝ 3 կգ: Բացը լրացվում է ներկրումներով: Թե ինչու չի խթանվում պահանջարկ ունեցող տեղական արտադրությունը, որի պարագայում սով եւ համանման քննարկումներն անիմաստ կդառնան, իշխանություններին չի հետաքրքրում: Նկատենք, որ տեղական հավի միսը ներմուծվածի համեմատ էապես թանկ է վաճառվում: Պարզ չէ, թե երբ ՀՀ-ում բուսայուղ կարտադրվի, նույնը՝ կարագի պարագայում, որը ներմուծվում է Նոր Զելանդիայից, Ֆինլանդիայից, Ֆրանսիայից ու Նորվեգիայից: Դժվար չէ պատկերացնել այն վիճակը, որում կհայտնվենք ներկրումների խոչընդոտի դեպքում: Փոխարենը գիտենք, որ 1 բնակչի հաշվով 6000-7000 քառակուսի մետր գյուղատնտեսական նշանակության հողեր ունենք, երբ շատ երկրներ դրա կեսն էլ չունեն: 1960-ին, երբ ՀՀ բնակչությունը 1,8 մլն էր, 600 հազար խոշոր մասնու կար, որպիսի ցուցանիշ ունենք 60 տարի անց արդեն 3 մլն բնակչության պարագայում: Արդյունքում՝ սեփական արտադրության նվազում, ներկրումների էլ աճ:

Լավատեսության շատ մեծ չափաբաժին է պահանջվում պարենային ներկա վիճակում ինչ-որ լուծում տեսնելու առումով: Սով որպես այդպիսին թերեւս չի լինի, իսկ ահա ուտելու սուր ցանկության պահանջի պարագայում պակաս կզգացվի: Կխորանա՞ այս վիճակն առաջիկայում, կապրենք կտեսնենք:

**30.06.2020, Երեւան**

# Հրաչյա Պողոսյան. «Հայոց եռագույնը մեր պարծանքն է, հպարտությունը, մեր ուժի եւ համախմբման գրավականը»

ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ

*ՌԴ-ում «Ազգ»-ի հատուկ թղթակից*

Հունիսի 15-ը թեեւ սովորական աշխատանքային օր էր ռուսաստանաբնակների համար, սակայն սանկտպետերբուրգցի մեր հայրենակից, ճանաչված բարերար եւ հասարակական գործիչ Հրաչյա Պողոսյանն աշխատանքի էր շտապում մեծ ոգեւորությամբ. չէ՞ որ այդ օրն իր հայրենիքում նշվում է որպես Հայաստանի դրոշի օր, եւ Պողոսյանը մտադիր էր այդ առիթով շնորհավորանքի ջերմ խոսք զետեղել իր անունը կրող բարեգործական հիմնադրամի կայքում եւ շնորհավորել իր հայրենակիցներին: Սակայն տեղ հասնելուն պես եւ օրվա նորություններին համացանցում ծանոթանալուց հետո ճանաչված բարերարի ծրագրերը «խառնվեցին», երբ նա մեծ զարմանքով եւ ուրախությամբ ծանոթացավ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի ինստագրամյան էջի այդ օրվա գրառմանը. «Եռագույնը լինում է բարձունքում, որին անընդհատ ձգտում ենք հասնել: Միշտ բարձր պահենք մեր դրոշը. 2006 թվականի հունիսի 15-ին ընդունվեց ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին»,- գրել էր Արմեն Սարգսյանն ու զետեղել Խոր Վիրապի հարեւանությամբ գտնվող բլրի բարձունքին վեհորեն ծածանվող հայոց եռագույնի լուսանկարը:

Այդ անչափ ծանոթ պատկերը ջերմ հիշողություններ արթնացրեց Հրաչյա Պողոսյանի հոգում, չէ՞ որ հայոց եռագույնը 2016 թվականին հենց իր մտահղացմամբ ու ջանքերով է տեղադրվել եւ այսօր հաղթական փողփողում է այդ բարձունքում՝ բիբլիական Արարատ լեռան ֆոնին:

Ընդհանրապես, դրոշի թեման մեծ տեղ է զբաղեցնում Հրաչյա Պողոսյանի բարեգործական գործունեության մեջ: Հիշատակության արժանի է մանավանդ հանրության կողմից մեծ ճանաչման արժանացած բարեգործական այն հայտնի ձեռնարկումը, երբ ի նշանավորումն 2018-ի մեր հոբելյանական տարեդարձների՝ Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման 100 եւ Երեւանի հիմնադրման 2800-ամյակների՝ Հայաստանի եւ Երեւանի դրոշները Հրաչյա Պողոսյանի սրաթռիչ մտքի արդյունքում 195 օր հանգրվանել են տիեզերքում՝ Միջազգային տիեզերական կայանում: Ի դեպ, դրոշները տիեզերք էին ուղարկվել մինչեւ Հայաստանի թավշյա հեղափոխությունը՝ մարտի 21-ին, տիեզերագնացներ Օլեգ Արտեմեւի, Էնդրյու Ֆոյթելի եւ Ռիչարդ Արնոլդի հետ:

Հրաչյա Պողոսյանը, որ, ի դեպ, Ռուսաստանի տիեզերագնացության ֆեդերացիայի անդամ է, բարեգործական էլի բազմաթիվ նշանակալի ներդրումներ է կատարել տիեզերագնացության ոլորտին աջակցելու գործում: Եվ հավանաբար նաեւ այդ էր պատճառը, որ այս անգամ որոշեց Հայաստանի անունը կապել տիեզերագնացության եւ տիեզերքի հետ:

Այդ օրերի մասին Հրաչյա Պողոսյանը հիշում է.

- Հայաստանի հեղինակությունը անչափ թանկ է ինձ համար, 2018-ին իմ պատմական Հայրենիքում տեղի ունեցած երկու իրադարձությունները չէին կարող ուշադրության չարժանացնել, որոշեցի նոր անակնկալով հանդես գալ եւ տիեզերական նվեր մատուցել: Հայաստանի եւ Երեւանի դրոշները տիեզերական շրջագայության ուղարկելու մտահղացումս կյանքի կոչելու նպատակով դիմեցի Տիեզերագնացության ֆեդերացիայի Հյուսիս-Արեւմտյան մասնաճյուղի առաջին փոխնախագահ Օլեգ Մուխինին: Նա հավանություն տվեց նախաձեռնությանս՝ նշելով, որ հայ ժողովրդի ներդրումը տիեզերական արդյունաբերության զարգացման գործում անուրանալի է եւ հիշեցրեց, որ լուսնագնացի ինքնագնաց շասսի առաջին նախագծողը Ալեքսանդր Քեմուրջյանն էր:

Այնուհետեւ ստացվեց Ռոսկոսմոսի ղեկավարության թույլտվությունը՝ դրոշները տիեզերք ուղարկելու համար: Միեւնույն ժամանակ, Հրաչյա Պողոսյանը դիմել էր Հայ Առաքելական եկեղեցուն՝ իր նախաձեռնության համար օրհնություն ստանալու:

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանի օրհնությունը ստանալուց հետո փետրվար ամսին Էջմիածնի իր նստավայրում Հրաչյա Պողոսյանին ընդունել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը: Նորին Սրբությունը ոչ միայն հավանություն տվեց նման անսովոր նախաձեռնությանը, այլեւ իր օրհնությունը տվեց՝ դրոշները տիեզերք ուղարկելու համար:

- Մարտի 2-ին Մոսկվայում Հայաստանի դեսպանատանը, Սանկտ Պետերբուրգում Հայաստանի գլխավոր հյուպատոսի խնդրանքով մեզ ընդունեց ՌԴ-ում ՀՀ դեսպան Վարդան Տողանյանը,-պատմում է Հրաչյա Պողոսյանը: Ինձ հետ էր նաեւ ՌԴ հերոս, տիեզերագնաց-փորձարկող Օլեգ Արտեմեւը, ում այդ օրը ես եւ Վարդան Տողանյանը հանդիսավոր պայմաններում հանձնեցինք դրոշները եւ հենց Արտեմեւին էլ պատիվ էր վիճակված մեր խորհրդանիշերը հասցնել Միջազգային տիեզերական կայան:

Եվ ահա հոկտեմբերի 7-ին, Հրաչյա Պողոսյանի հայրենի եզերքում՝ Արագածոտնի մարզի Ագարակ համայնքում, որտեղ մեծ հանդիսավորությամբ նշվեց գյուղի վերածննդի 10-ամյա հոբելյանը եւ «Արարատ 73»-ի հաղթանակի 45-ամյակը, տիեզերքում «շրջագայած» դրոշներից մեկը՝ Հայաստանի դրոշը, բարերարը հանդիսավորությամբ հանձնեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, իսկ մյուսը՝ Երեւանի դրոշը, սպասում էր իր պատեհ «ժամին» եւ այն պետք է հանձնվեր Երեւանի նոր քաղաքապետին:

Այդ պատեհ առիթը հանդիսացավ ամիսներ անց, երբ 2019-ի հունիսի 20-ից 21-ը Սանկտ Պետերբուրգում անցկացվեց «Երեւանյան օրեր» միջոցառումը: Տոնակատարության իր մասնակցությունն էր բերել Հայաստանից ժամանած պատվիրակությունը՝ Երեւանի քաղաքապետ Հայկ Մարությանի գլխավորությամբ: Պաշտոնական հանդիպումներին զուգընթաց՝ հյուրերին սպասվում էր յուրօրինակ նվեր-անակնկալ՝ բարերար Հրաչյա Պողոսյանը Երեւանի քաղաքապետին հանձնեց Երեւանի 2800-ամյակի դրոշը, որը 195 օր շրջագայել էր տիեզերքում՝ միջազգային տիեզերական «Միր» կայանում:

Հայկ Մարությանը շնորհակալություն հայտնեց Հրաչյա Պողոսյանին՝ նման անսովոր նվերի համար եւ հավաստիացրեց, որ տիեզերական նվերն իր արժանի տեղը կզբաղեցնի Երեւանի քաղաքապետարանում:

- Հայկական դրոշը՝ մեր սիրելի ու պաշտելի եռագույնը, Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշն է, եւ մենք պետք է ազգովին մեծ հարգանք եւ ակնածանք տածենք այդ սրբության հանդեպ,- ասում է Հրաչյա Պողոսյանը,-որովհետեւ եթե բոլորս համախմբվենք մեր դրոշի շուրջ, ապա կդառնանք ավելի միաբան, ուժեղ, հզոր եւ անպարտելի:

Երկար տարիների ընթացքում՝ Ռուսաստանում, Հայաստանում եւ արտերկրում մեծ հարգանքի եւ ճանաչման արժանացած Հրաչյա Պողոսյանի եւ նրա բարեգործական հիմնադրամի նախաձեռնությամբ ստեղծվել եւ վերականգնվել են ավելի քան 200 հոգեւոր, մշակութային եւ պատմական նշանակություն ունեցող հուշարձաններ, իրականացվել եւ կյանքի են կոչվել Հայրենական մեծ պատերազմի հերոսներին եւ իրադարձություններին նվիրված 120-ից ավելի հուշարձաններ եւ նախագծեր, իսկ մի մասն էլ իրականացման փուլում են: Հրաչյա Պողոսյանի մտահղացմամբ ու աջակցությամբ հրատարակվել են տասնյակ գրքեր եւ ամսագրեր, նկարահանվել են մի շարք մեծարժեք եւ ուսուցողական վավերագրական ֆիլմեր:

Ճանաչված բարերարի եւ իր բարեգործական հիմնադրամի կողմից կյանքի կոչված գործերը վերաբերվում են մեր կյանքի բոլոր ոլորտներին եւ իրականացվում են Ամենայն Ռուսիո Եկեղեցու առաջնորդ Կիրիլի եւ Հայ Առաքելական եկեղեցու հովվապետ Գարեգին Բ-ի օրհնությամբ: Նրա գործունեությունը բարձր գնահատականների է արժանացել իշխանության բարձր օղակներում ինչպես Ռուսաստանում եւ Հայաստանում, այնպես էլ տարբեր երկրներում, որտեղ իրականացվել են:

Հրաչյա Պողոսյանը դեռեւս բազմաթիվ նպատակներ ու երազանքներ ունի այս կյանքում, նրա պրպտուն ու սրաթռիչ միտքն ամենուր է՝ երկրագնդի բոլոր ծագերում՝ օդում, ծովում, ցամաքում, տիեզերքում... եւ ամեն անգամ նա հանրությանը զարմացնում է իր անհավանական, աննախադեպ եւ օրիգինալ գաղափարներով ու ծրագրերով, որոնք օր օրի կյանք ու ավյուն են ստանում, հայտնվում մեր կողքին՝ դառնալով մեզ շրջապատող աշխարհի բաղկացուցիչ մասնիկները:

Ահա այսպիսի գեղեցիկ հուշեր արթնացրեց հունիսի 15-ը եւ Սանկտ Պետերբուրգում բնակվող մեր նշանավոր հայրենակիցը օրվա խորհուրդը ամփոփեց հետեւյալ բառերով. «Հայոց եռագույնը մեր պարծանքն է, հպարտությունը, մեր ուժի եւ համախմբման գրավականը»:





«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԹԷՔԷՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960,
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Թեքեյան Փաբլիշինգ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 2.7.2020, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: